17.qxd 23/08/2026 15:01 Page 1

Գեղամա աշխարհ

Քաղաքական, հասարակական, մշակութային թերթ 20 օգոստոսի 2026թ. թիվ 17 (645)

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԸ ՎԵՐԱՆՇԱՆԱԿՎԵԼ Է ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ

ՀՀ կառավարության 2026 թվականի օգոստոսի 13-ի նիստի համապատասխան որոշմամբ Կարեն Սարգսյանը վերանշանակվել է Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի պաշտոնում:

Այդ վերանշանակումը ՀՀ կառավարության արդարացի եւ համարժեք գնահատականն է Կարեն Սարգսյանի կողմից Գեղարքունիքի մարզպետի պաշտոնում 2021-2026 թվականներին իրականացված այն հսկայածավալ, հետեւողական ու ջանադիր աշխատանքի, որը եղել է բոլորիս աչքի առջեւ՝ մարզի բոլոր համայնքների բոլոր բնակավայրերում, որի արդյունքները նկատելի են եղել բազմաթիվ տնտեսություններում, քաղամասերում ու փողոցներում:

Բավական է ասել, որ, մեր կողմից կատարված ուսումնասիրության մոտավոր հաշվարկներով, Կարեն Սարգսյանի պաշտոնավարության ընթացքում մարզում կապիտալ ներդրումները կազմել են ավելի քան 122 միլիարդ դրամ, որի արդյունքում իրականացված սոցիալ-տնտեսական ու կենսական նշանակության ծրագրերը մոտենում են շուրջ հազարի՝ ներառյալ նաեւ ընթացքի մեջ գտնվող ծրագրերը:

Հիմնանորոգվել են միջպետական, հանրապետական, մարզային ու համայնքային նշանակության հարյուրավոր կիլոմետրերի հասնող ճանապարհներ, խմելու եւ ոռոգման ջրատարներ, արտաքին լուսավորության ցանցեր, կառուցվել կամ հիմնանորոգվել ու վերանոնորգվել մի քանի տասնյակի հասնող դպրոցական, նախադպրոցական, առողջապահական հաստատությունների շենքեր, մշակույթի տներ:

Կարեն Սարգսյանի պաշտոնավարման օրոք Գեղարքունիքի մարզը հասել է անասելի ծաղկման կենսագործունեության գրեթե բոլոր ոլորտներում, ու առաջընթացը շարունակվում է:

Հարկավոր է հպարտորեն շեշտել, որ 2021-2026 թվականներին Գեղարքունիքի մարզում լուծում են ստացել բազմաթիվ ու բազմազան այնպիսի հիմնախնդիրներ, որոնք մեր պետությանը տխուր ժառանգություն էին մնացել դեռեւս ԽՍՀՄ ժամանակներից:

Իհարկե, «Գեղամա աշխարհ» թերթն արձանագրել է այդ բոլոր ձեռքբերումներն առանձին-առանձին, սակայն հարկ է ու ժամանակ է, որ ընդհանրացվի այդ հայրենանվեր, դարերի ու սերունդների համար իրականացված աշխատանքների հանրագումարը:

Խորապես համոզված ենք, որ պաշտոնավարման հաջորդ շրջանի ընթացքում Կարեն Սարգսյանի ղեկավարությամբ Գեղարքունիքի մարզը կշարժվի միայն ու միայն վերելքի, ծաղկման ու հզորացման նոր ճանապարհով, նոր ու անեւերեւակայելի ձեռքբերումներով, ու մենք կլինենք ականատեսն ու արձագրողը այս սպասվող վերելքի, հայրենաշինության հզոր թափի:

«Գեղամա աշխարհ» թերթի խմբագրակազմը ջերմորեն շնորհավորում է Կարեն Սարգսյանին՝ Գեղարքունիքի մարզպետի պաշտոնում վերանշանակվելու կապակցությամբ, մաղթում քաջառողջություն, աշխատանքային անսպառ եռանդ, նորանոր ձեռքբերումներ ու հաջողություններ:

«Գեղամա աշխարհ»

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԸ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ Է ԱՆՑԿԱՑՐԵԼ ՄԱՐԶԻ ԿԱՌՈՒՑՅՈՒՆԵՐԻ ՇԻՆՀՐԱՊԱՐԱԿՆԵՐՈՒՄ

Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը շարունակում է մշտադիտարկումներ իրականացնել կենսական նշանակության կառույցների՝ դպրոցների, մանկապարտեզների, համայնքային, մարզային ու հանրապետական նշանակության ճանապարհների կառուցման կամ հիմնանորոգման շինհրապարակներում:

Հունիսի երկրորդ տասնօրյակից մինչ օգոստոսի առաջին տասնօրյակ Կարեն Սարգսյանը համայնքների ղեկավարների կամ պատասխանատու պաշտոնական անձանց հետ մշտադիտարկում է իրականացրել Ծովագյուղի, Կարճաղբյուրի, Ակունքի, Հայրավանքի, Ծովինարի միջնակարգ, Գավառի թիվ 4 հիմնական դպրոցների, Մ-10-Սեւան-Մարտունի-Վարդենիս-ՀՀ միջպետական սահման, Սեւան-Վարդենիս մայրուղուց Ծովիար եւ Զոլաքար մտնող, ինչպես նաեւ Դպրաբակ-Բարեպատ-Կալավան մարզային նշանակության ճանապարհների հիմնանորոգման կամ միջին նորոգման շինհրապարակներ:

Կարեն Սարգսյանը զրուցել է շինարարների հետ, նկատված թերությունների շուրջ արել դիտողություններ եւ տվել համապատասխան հանձնարարականներ:

Գեղարքունիքի մարզպետը հուլիսի ընթացքում Մարտունի համայնքի ղեկավար Հովհաննես Հովեյանի հետ այցելել է Մարտունի քաղաքի Դավիթ Անհաղթ, Հրաչյա Ներսիսյան եւ Նարեկացի փողոցներ՝ տեղում հետեւելու հիմնանորոգման աշխատանքների ընթացքին:

ՀՀ կառավարության 2025 թվականի սուբվենցիոն ծրագրերի շրջանակում այստեղ իրականացվում են շուրջ 200 միլիոն դրամի ընդհանուր արժեքով ճանապարհաշինական, մայթերի կառուցման եւ բարեկարգման աշխատանքներ:

Դավիթ Անհաղթ եւ Նարեկացի փողոցներում շինարարությունն արդեն ավարտական փուլում է, իսկ Հրաչյա Ներսիսյան փողոցում շարունակվում են մայթերի կառուցման աշխատանքները:

Հիմնանորոգման աշխատանքները շարունակվում են նաեւ Չարենցի, Ալաշկերտի եւ Մխիթար Հերացու փողոցներում:

Մարտունին օրեցօր ավելի բարեկարգ եւ հարմարավետ քաղաք է դառնում՝ շնորհիվ ՀՀ կառավարության կողմից իրականացվող ներդրումների եւ սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման:

«Գեղամա աշխարհ»

ԳԵՂԱՐՈՑԻ ՋՐՎԵԺԸ

Բարձրանում եմ Ջրի ոգուն ընդառաջ՝
Արագածի արեւելյան փեշի մոտ,
Գեղարոտի ծորով ծաղկում ու կանաչ,
Ժայռերի տակ՝ արեւահար ու հպարտ:
Սպառաժե երկնակարկառ բարձունքից
Ջուրն է թափվում գոռ, միալար շառաչով,
Վարսերն արծակ, անկանգ երթում,
սրընթաց՝
Համց գեղանի հավերժահարս՝ վառ
քողով...
Լույսի շողն է փարվում ջրի վարսերին,
Գունախաղի պատկերներն են փայլփլում,
Փերիների պարն է ճկուն ալիքվում
Համերգի տակ մշտակարկաչ ջրվեժի...
Իսկ ջրվեժը գետ է դառնում շառաչուն,
Ջորով իջնում դեպ իր ճամփան հավերժի,
Ջինջ ու զուլալ իր էությամբ ոգեղեն՝
Արարչական մի գորավոր համբույրի...
Ես գնում եմ համառորեն դեպի վեր,
Դեպ Ակունքը վսեմափայլ ջրվեժի,
Ուր Բնությունն անմահ հրաշք է երկնել՝
Հայացքի տակ գաղտնախորհուրդ
աստղերի:
Մոտենում եմ... Ջրի ոգին սիրահար
Տապ-տոթի մեջ Ցող է դառնում մոգական,
Իջնում դեմքիս կարոտակեզ, դողահար,
Ոտքից գլուխ հպումներով ինձ թրջում:
Հայտնվել եմ կախարդական եզերքում,
Երանության բույրերի մեջ ցանկալի,
Ցողիկը պաղ դիպչում է տաք իմ սրտին,
Ես լսում եմ որոտները Կայծակի:
Հոգիս Կավե ծույլ մարմինն է ինձ թողնում,
Ինքն է գնում Երազային ճախրանքի:
Մայրամուտը ցնծում է ու հմայվում՝
Անհանդերձանք, կայտառ, պայծառ,
հոլանի...
Ապա հոգիս հողի հետ է համբուրվում,
Քնքուշ ու զով մայրամուտի Հովիկի...
Հայրանում է Հայ աշխարհիս հողեղեն՝
Ավետելով ծնունդը նոր Վահագնի:
Ապա հոգիս Արագածի բարձունքից
Ճախրով գալիս ու սուզվում է ջինջ գետի
Դիցեր ծնող , հզորազոր , սրբացած
Ջրերի մեջ Սկրտության խորհրդի:
Ապա հոգիս Մահն է ջնջում անվարան,
Ելնում կրկին Ջրի ոգուն ընդառաջ,
Որտեղ կյանքն է արյան եռքով տրոփում,
Որտեղ Սերն է այսքան, զուլալ, մշտագոյ...

Խոսրով Խլղաթյան

17.qxd 23/08/2026 15:01 Page 2

ՄԻՋԻՆ ՆՈՐՈԳՄԱՆ Է ԵՆԹԱՐԿՎՈՒՄ ԵՐԵՎԱՆ-ՄԵՎԱՆ-ԻՋԵՎԱՆ ԱՎՏՈՄԱՅՐՈՒՂՈՒ 20,7 ԿԻԼՈՄԵՏՐԱՆՈՑ ՀԱՏՎԱԾԸ

Արդեն մի քանի օր է, ինչ սկսվել եւ ընթանում են Մ-4, Երեւան-Սեւան-Իջեւան-ՀՀ սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի միջին նորոգման աշխատանքները կմ51+100-կմ 68+000 ձախ ու աջ գոտիների հատվածներում:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության եւ ենթակառուցվածքների կառավարման վարչությունից, ծրագիրն իրականացվում է ՀՀ ՏԿԵ նախարարության պատվիրատվությամբ եւ պետական բյուջեի միջոցներով:

Ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 1 միլիարդ 89 միլիոն 300 հազար դրամ: Գագարին բնակավայրի մոտով անցնող եւ մինչեւ Սեւան հասնող նորոգվող ճանապարհահատվածի ձախ գոտու երկարությունը կազմում է 16.9 կիլոմետր, աջ գոտու երկարությունը՝3,8 կիլոմետր:

Ծրագրով նախատեսված է եղած ասֆալտբետոնյա ծածկի ֆրեզման, անհրաժեշտության դեպքում՝ փոսային նորոգման ու հարթեցնող շերտի տեղադրման եւ 5 սանտիմետր շերտով ասֆալտբետոնյա նոր ծածկի կառուցման աշխատանքներ: Միջին նորոգման ենթարկվող ճանապարհի ընդհանուր մակերեսը կազմում է 237 հազար 721 քառակուսի մետր: Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2026 թվականի հունիսի 26-ին ու կավարտվեն օգոստոսի երրորդ տասնօրյակի ընթացքում:

2026 թվականի հուլիսի 24-ի դրությամբ շինարարությունն իրականացված է շուրջ 65 տոկոսով:

«Գեղամա աշխարհ»

ԿԽՄԿ-Ն ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՆՎԻՐԱԲԵՐԵԼ Է ԿՈՒԼՏԻՎԱՏՈՐ

Կարմիր խաչի միջազգային կոմիտեն Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքին նվիրաբերել է կուլտիվատոր՝ գյուղացիական տնտեսություններին համապատասխան աջակցություն ցուցաբերելու նպատակով:

Ինչպես տեղեկացրին Վարդենիսի համայնքապետարանի աշխատակազմից, այդ ձեռնարկի շրջանակներում հուլիսի 23-ին Վարդենիս համայնքի ղեկավար Ահարոն Խաչատրյանն ընդունել է Հայաստանում Կարմիր խաչի միջազգային կոմիտեի պատվիրակության ներկայացուցիչներին՝ Տնտեսական անվտանգության ծրագրերի ղեկավար Ստեփան Գրիգորյանին եւ նույն բաժնի ներկայացուցիչ Նարինե Քոչարյանին:

Հանդիպման ընթացքում քննարկվել են համատեղ իրականացվող ծրագրերն ու հումանիտար աջակցությանն ուղղված քայլերը:

Համագործակցության շրջանակներում ԿԽՄԿ-ն Վարդենիս համայնքին նվիրաբերել է կուլտիվատոր, որը կիրառվելու է սահմանամերձ բնակավայրերում գյուղատնտեսական աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու համար:

Վարդենիս համայնքի ղեկավարը երախտագիտություն է հայտնել ԿԽՄԿ ներկայացուցիչներին ու հավաստիացրել, որ նվիրաբերված գյուղատնտեսական գործիքը հավուր պատշաճի կծառայեցվի համայնքի գյուղացիական տնտեսությունների կարիքներին:

ՀԻՄՆԱՆՈՐՈԳՎՈՒՄ Է ԼԱՆՋԱՂԲՅՈՒՐ ԳՅՈՒՂԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԸ

Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Լանջաղբյուր գյուղում ՀՀ կառավարության կողմից 2026 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում սկսվել եւ ընթանում են մանկապարտեզի շենքի հիմնանորոգման աշխատանքները:

Ինչպես տեղեկացրին Գավառի համայնքապետարանի աշխատակազմից, Լանջաղբյուրի մանկապարտեզի շենքի հիմնանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է կազմում է 256 միլիոն 96 հազար դրամ, որի 75 տոկոսն հատկացվելու է պետական, իսկ 25 տոկոսը՝ համայնքի բյուջեից:

Ծրագրով նախատեսված է տանիքի, հատակի, սանհանգույցների, ջրամատակարարման, էներգամատակարարման համակարգերի հիմնանորոգում, նոր դռների ու պատուհանների տեղադրում, պատերի ներքին հարդարում, այլ աշխատանքներ:

Շինարարությունը նախատեսվում է ավարտել 2028 թվականի հունիսին:

Այժմ երկհարկանի շենքում կատարվում են քանդման եւ տարածքից շինաղբի տեղափոխման աշխատանքներ:

Ալվարդ Մանուկյան

ՀԻՄՆԱՆՈՐՈԳՎՈՒՄ Է ԱԿՈՒՆՔԻ Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՓՈՂՈՑԻ 364 ԳԾԱՄԵՏՐ ՀԱՏՎԱԾԸ

Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Ակունք գյուղում ՀՀ կառավարության կողմից 2026 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում ընթանում են Ա.Ավետիսյան փողոցի 364 գծամետր հատվածի հիմնանորոգման աշխատանքները:

Ինչպես տեղեկացրին Վարդենիսի համայնքապետարանի աշխատակազմից, Ա. Ավետիսյան փողոցի ասֆալտապատման ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 29 միլիոն 375 հազար դրամ, որի 50 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 50 տոկոսը՝ Վարդենիսի համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսվում է իրականացնել՝ հողային պաստառների վերականգնում, ջրահեռացման համակարգի վերանորոգմամբ՝ ջրթող կառուցվածքների նորոգմամբ, նոր խողովակների տեղադրմամբ եւ ջրթող վաքերի կառուցմամբ, ճանապարհի ասֆալտապատում, ճանապարհի կահավորում՝ իջատեղերի, ճանապարհային նշաններ եւ գծանշման իրականացմամբ: Հիմնանորոգվող ճանապարհի մակերեսը կազմում է շուրջ 2184 քառակուսի մետր:

Շինարարական աշխատանքները սկսվել են 2026 թվականի հուլիսի 15-ից եւ օգոստոսի կեսերի դրությամբ արդեն գտնվում են ավարտական փուլում:

Աշխատանքների մշտադիտարկում իրականացնելու նպատակով օրերս շինհրապարակ է այցելել Վարդենիս համայնքի ղեկավար Ահարոն Խաչատրյանը:

ՄԵՎԱՆԻ ՎԼ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԸ ԿՈՒՆԵՆԱ ՆՈՐ ՇԵՆՔ

Գեղարքունիքի մարզի Սեւան քաղաքի Վլադիմիր Կարապետյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցը կունենա նորակառույց, արդի չափորոշիչներին համապատասխան շենք:

Հուլիսի 23-ին Սեւանի Վլ. Կարապետյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցում տեղի է ունեցել դպրոցի 1000 աշակերտի համար նախատեսվող նոր՝ եռահարկանի շենքի կառուցման նպատակով նախագծի տեղակայման՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եւ փորձաքննության հանրային առաջին լսումը:

Այն նախաձեռնվել է «Եռանկյունի Պրոջեքտ» ՍՊԸ-ի կողմից՝ համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եւ փորձաքննության մասին» ՀՀ օրենքի եւ ՀՀ կառավարության համապատասխան որոշման:

Հանրային լսմանը ներկա են եղել մարզային եւ համայնքային իշխանությունների ներկայացուցիչներ, դպրոցի տնօրինությունը, աշխատակիցները, ինչպես նաեւ Սեւանի շահագրգիռ հանրության ներկայացուցիչներ:

Դպրոցի նոր շենքի կառուցման համար առաջիկայում նախատեսվում է անցկացնել մի քանի հանրային լսումներ եւս:

Արմինե Ղուկասյան

ԳԱՎԱՌՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԵՑ ԳԵՂԱՆԿԱՐՉԱԿԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ՍԻՄՊՈԶԻՈՒՄԸ

Գեղարքունիքի մարզի Գավառի համայնքապետարանը 2025 թվականի աշնանից մինչ այժմ արդեն 3-րդ անգամ է տեղի Գեղարվեստի դպրոցին հնարավորություն ընձեռում՝ իրականացնելու գեղանկարչական հերթական սիմպոզիումը:

Սիմպոզիումի հիմնական նպատակը Գավառի ամառային պատկերների արտացոլումն է գեղանկարչական կտավների միջոցով: Այն անցկացվում է ՀՀ նկարիչների միության հետ համատեղ: Միության հինգ անդամներ գեղարվեստի դպրոցի սաների հետ Գավառ համայնքի տարբեր բնակավայրերում նկարում են պատմամշակութային հուշարձաններ, գյուղական եւ բնության տեսարաններ:

Իրենց համայնքին արվեստագետի աչքերով են սկսում նայել նաեւ ապագա նկարիչները: Նրանք բացահայտում են համայնք գրավչությունները, հնարավորություն են ունենում՝ ավագ եւ փորձառու ընկերների կողքին ստեղծագործելու, հայրենի բնաշխարհի տեսարանները պատկերելիս նրանց ցուցումներին հետեւելու: Մեկ շաբաթվա ընթացքում գեղարվեստի դպրոցի պատանի նկարիչների աշխատանքներից առավել հաջողվածները առաջիկայում ցուցադրվելու են նկարիչների միության անդամների աշխատանքների հետ կողք կողքի:

Գավառի Գեղարվեստի դպրոցի տնօրեն Հասմիկ Թամամավեյանի տեղեկացմամբ՝ սիմպոզիումի աշխատանքներն ավարտվել են 2026 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ, ինչի արդյունքում գեղանկարիչները ստեղծել են Գավառի ամառը պատկերող 35 կտավ, որոնցից 15-ը ընտրվել են՝ Գավառի համայնքապետարանի շենքում մշտական ցուցադրության ներկայացնելու համար:

Ալվարդ Մանուկյան

17.qxd 23/08/2026 15:01 Page 3

ԳԵՂՀՈՎԻՏՈՒՄ ԿԱՌՈՒՑՎՈՒՄ Է ԿԵՂՏԱՋՐԵՐԻ ՄԱՔՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԿԱՅԱՆ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Գեղհովիտ գյուղում մեկնարկել եւ ընթանում են կեղտաջրերի մաքրման կայանի կառուցման աշխատանքները:

Ինչպես տեղեկացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից, Գեղհովիտի կեղտաջրերի մաքրման կենսաբանական կայանի կառուցման ծրագիրն իրականացվում է Գերմանիայի Դաշնային Հանրապետության միջազգային համագործակցության (GIZ, EU4SEVAN) շրջանակներում՝ պետական միջոցներով եւ համայնքապետարանի պատվերով:

Կայանի տեղադրումը թույլ կտա՝ կանխել չմաքրված կենցաղային կեղտաջրերի արտահոսքը դեպի Մարտունի գետ եւ Սեւանա լճի ավազան: Կայանում կիրառվելու է կենսաբանական մաքրման արդյունավետ եղանակ (ֆիքսված հունով կենսաբանական ռեակտոր՝ FBR), ինչն ապահովում է պարզ, հեշտ շահագործվող եւ քիչ ծախսատար մաքրման գործընթաց: Մաքրված կեղտաջրերը համապատասխանեցվելու են ոռոգման չափանիշներին եւ օգտագործվելու են հարակից հողատարածքների ոռոգման համար:



Գեղհովիտում 0.025 հա հատկացված տարածքում կառուցվող այս կայանը սպասարկելու է շուրջ 220 առանձնատուն, երկու դպրոց (յուրաքանչյուրը՝ 500 աշակերտ տեղով), 100 տեղանոց մանկապարտեզ, 150 հանդիսատեսի համար նախատեսված մշակույթի տուն եւ 20 տեղանոց բուժամբուլատորիա:

-Աշխատանքներն ընթանում են սահմանված ժամանակացույցով, եւ ծրագրի ավարտից հետո Մարտունի համայնքը կունենա բնապահպանական բարձր չափանիշներին համապատասխանող ենթակառուցվածք:

Մարտունի համայնքի ղեկավար Հովհաննես Հովեյանն աշխատանքային այցով եղել է Գեղհովիտ բնակավայրում՝ տեղում ծանոթանալու կեղտաջրերի կենսաբանական մաքրման կայանի կառուցման ընթացքին,-ներկայացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից:

Շինարարական աշխատանքները նախատեսված է ավարտել 2026 թվականի ընթացքում:

Ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 27 միլիոն դրամ:

ՍՈԹՔ ԳՅՈՒՂՈՒՄ ԿԱՌՈՒՑՎՈՒՄ Է ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ



ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի միջոցներով Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Սոթք գյուղում կառուցվում է ոռոգման համակարգ՝ ջրամբար ու 2500 մետր երկարության ջրատար ցանց:

Ինչպես տեղեկացրին Վարդենիսի համայնքապետարանի աշխատակազմից, ծրագրի արժեքը կազմում է 20 միլիոն 400 հազար դրամ:

Ծրագրով նախատեսվում է կառուցել 4400 խորանարդ մետր տարողության ջրամբար եւ 2500 մետր երկարության ոռոգման ցանց՝ պոլիէթիլենային խողովակներով:

Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2026 թվականի հունիսին եւ կավարտվեն նույն տարվա սեպտեմբերին:

Ծրագրի իրականացման արդյունքում Սոթքում ոռոգելի կդառնա շուրջ 70 հեկտար տնամերձ կամ սեփականաշնորհված հողամաս:

Ծրագրի շահառու են հանդիսանում Սոթք գյուղի տնտեսությունների կեսը՝ շուրջ 200 տնտեսություն:

Նույն ծրագրի շրջանակներում օրերս Վարդենիս համայնքի ղեկավար Ահարոն Խաչատրյանն աշխատանքային հանդիպում է ունեցել ծրագիրն իրականացնող «Hayk For Our Heroes» կազմակերպության հիմնադիր եւ ղեկավար Դավիթ Օհանյանի եւ կազմակերպության մյուս անդամների հետ:

Հանդիպման ընթացքում ամփոփվել են նախկինում համատեղ իրականացված ծրագրերը, քննարկվել ընթացիկ աշխատանքներն ու առաջիկա նախաձեռնությունները՝ համայնքի զարգացմանն ուղղված համագործակցության շրջանակում:

Այնուհետ կողմերն այցելել են Սոթք բնակավայր՝ տեղում ծանոթանալու ոռոգման ցանցի եւ ջրամբարի կառուցման աշխատանքների ավարտական փուլի աշխատանքներին:

ԳԱՎԱՌԻ ԹԻՎ 1 ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒ ԹԻՎ 7 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԿԱՌՈՒՑՎԵՆ ՆՈՐ ՇԵՆՔԵՐ

Գեղարքունիքի մարզի Գավառի համայնքապետարանում տեղի է ունեցել Գավառի թիվ 1 հիմնական եւ Գավառի թիվ 7 միջնակարգ դպրոցների կառուցման նախագծերի տեղակապման վերաբերյալ հանրային լսում:

Հանրային լսմանը մասնակցել են դպրոցների կառուցման ծրագրերի պատվիրատու հանդիսացող «Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի», նախագծող կազմակերպության, Գեղարքունիքի մարզպետի եւ Գավառի համայնքապետարանի աշխատակազմերի, վերոնշյալ դպրոցների, ՀՈՒԿ-ների, ՀԿ-ների ներկայացուցիչներ, անհատ քաղաքացիներ:

Հանդիպման ընթացքում քննարկվել են նախագծի տեղակապման աշխատանքներին վերաբերվող հարցեր, հնչել կարծիքներ ու առաջարկներ, որոնք հաշվի կառնվեն վերջնական նախագծային փուլում:

Այս դպրոցների կառուցման հետ կապված այլ հարցեր կքննարկվեն հաջորդիվ կազմակերպվող հանրային լսումների ընթացքում:

Գավառի թիվ 1 հիմնական ու թիվ 7 միջնակարգ դպրոցների գործող շենքերը կառուցվել են ավելի քան կես դարի վաղեմությամբ ու արդիականացման խիստ կարիք ունեն: Նոր շենքերը կկառուցվեն դպրոցական նույն շենքերի տեղում, ՀՀ կառավարության կողմից իրականացվող «300 դպրոց, 500 մանկապարտեզ» ծրագրի շրջանակներում:

Ալվարդ Մանուկյան

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՆԱՊԱՐՀԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻՆ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՏԿԱՑՎԵԼ Է 814 ՄԻԼԻՈՆ 575 ՀԱԶԱՐ ԴՐԱՄ

Գեղարքունիքի մարզի ճանապարհաշինության ոլորտին ՀՀ կառավարության կողմից հատկացվել է 814 միլիոն 575 հազար դրամ:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության եւ ենթակառուցվածքների կառավարման վարչությունից, ՀՀ կառավարության 2026 թվականի օգոստոսի 6-ի հերթական նիստում որոշում է կայացվել՝ ՀՀ պետական բյուջեից 814 միլիոն 575,6 հազար դրամ հատկացնել Սեւան-Մարտունի-Վարդենիս միջպետական նշանակության ավտոճանապարհի 9 կիլոմետր եւ 104 միլիոն 641 հազար դրամ՝ Ճամբարակ համայնքի Ծափաթաղ բնակավայրի կենտրոնական հատվածից (Հ. Աբրահամյանի անվան միջնակարգ դպրոց) դեպի ՀՀ հանրապետական նշանակության ճանապարհի 800 գծամետր հատվածում հիմնանորոգման աշխատանքներ իրականացնելու համար:

Սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում 4 միլիոն 711.7 հազար դրամ հատկացվել է Մարտունի համայնքի Արծվանիստ բնակավայրի մանկապարտեզի շենքի հիմնանորոգման աշխատանքների, ինչպես նաեւ անհրաժեշտ գույքի ձեռքբերման համար: Եվս 323 միլիոն 415.2 հազար դրամ հատկացվել է Մարտունի, Զոլաքար,Գեղհովիտ, Լիճք, Ծակքար, Վերին Գետաշեն, Վաղաշեն բնակավայրերի փողոցների 7,8 կիլոմետր հատվածի ասֆալտապատման աշխատանքների իրականացման համար:

ՀԻՄՆԱՆՈՐՈԳՎՈՒՄ ԵՆ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՋՈՐՍ ՇԵՆՔԵՐԻ ՏԱՆԻՔՆԵՐԸ

Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքում 2026 թվականի հուլիսի վերջերից սկսվել եւ ընթանում են Սեյսմանուկյան-3,7, Խ. Ստեփանյան-13 եւ Վ. Համբարձումյան-11 հասցեներում գտնվող բազմաբնարան շենքերի տանիքների հիմնանորոգման աշխատանքները:

Ինչպես տեղեկացրին Վարդենիսի համայնքապետարանի աշխատակազմից, Վարդենիս համայնքի բազմաբնակարան չորս շենքերի տանիքների հիմնանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 107 միլիոն 900 հազար դրամ, որն ամբողջությամբ հատկացվել է Վարդենիսի համայնքապետարանի բյուջեի միջոցներից:

Ծրագրով նախատեսված է հին տանիքների ազբոշիֆերյա ծածկի փոխարինում ցինկե թիթեղապատ ծածկով: Նորով է փոխարինվում նաեւ փայտյա կավարածածկը: Հիմնանորոգվող տանիքների ընդհանուր մակերեսը կազմում է 3460 քառակուսի մետր: Շինաշխատանքները նախատեսվում է ավարտել 2026 թվականի սեպտեմբերի առաջին տասնօրյակի ընթացքում:

-Վարդենիս քաղաքն ունի 43 բազմաբնակարան բնակելի շենք, որոնցից 30-ի տանիքները նախորդ մի քանի տարիների ընթացքում հիմնանորոգվել են: Համայնքի առաջնահերթ նպատակն է՝ ավարտին հասցնել քաղաքի բոլոր բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգումը՝ ապահովելով բնակիչների համար անվտանգ եւ բարեկարգ բնակելի պայմաններ,- ներկայացրին Վարդենիսի համայնքապետարանի աշխատակազմից:

Խոսրով Խլղաթյան

ԴԱՐԱՆԱԿՈՒՄ 2018-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 5 ԾՐԱԳԻՐ Է ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ

Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Դարանակ գյուղում սուբվենցիոն եւ պետական ծրագրերի շրջանակներում 2018-2025 թվականների ընթացքում սոցիալ-տնտեսական եւ կենսական նշանակության 5 ծրագիր է իրականացվել, որոնց ուղղությամբ կատարված կապիտալ ներդրումները կազմել են 561 միլիոն 24 հազար դրամ:

Ինչպես տեղեկացրին Վարդենիսի համայնքապետարանի աշխատակազմից, իրականացված ծրագրերից 4-ը սուբվենցիոն են՝ 57 միլիոն 24 հազար դրամ ընդհանուր արժեքով, 1-ը՝ պետական՝ 504 միլիոն դրամ արժեքով:

Իրականացված ծրագրերի արդյունքում Դարանակում 2018-2025 թվականների ընթացքում կառուցվել է 4725 մետր խմելու ջրատարի ներքին ու արտաքին ցանցեր, 3720 մետր արտաքին լուսավորության ցանց, հիմնանորոգվել 4500 մետր հանրապետական նշանակության ճանապարհ:

Պետական ծրագրով 2019 թվականին հիմնանորոգվել է Շողակաթ-Վարդենիս հանրապետական նշանակության ավտոճանապարհի՝ Դարանակի վարչական տարածքով անցնող հատվածը, շուրջ 504 միլիոն դրամ արժեքով:

Գեղամա աշխարհ



17.qxd 23/08/2026 15:01 Page 4

ԻԼԻԿԱՎԱՆՔՆ ՈՒ ՆՐԱՆ ՇՐՋԱՊԱՏՈՂ ԲԵՐԴՇԵՆԸ

Գեղարքունիքի մարզի հարավարեւմտյան կողմում, Գեղամա լեռնաշքայի բարձունքներից մեկում, վեր է խոյանում Իլիկավանքը կամ Պառավավանքը, որը հեռվի ցածրություններից առանձնակի շուք է տալիս իրեն շրջապատող լեռնաստանին:

Այն հազարամյակներ շարունակ հանդիսացել է հայ ժողովրդի կարեւոր ու ճանաչված սրբատեղիներից եւ ուխտավայրերից մեկը: Պատմաճարտարապետական այս հուշարձանը գտնվում է Գավառ համայնքի Լանջաղբյուր գյուղի վարչական տարածքում, ծովի մակերեւույթից մոտ 2200 մետր բարձրության վրա:

Ըստ տարածված ավանդազրույցի՝ հոգեւոր այս կառույցն իր անվանման երկու տարբերակները ստացել է այն պատճառով, որ կառուցվել է մի բարեպաշտ տարեց կնոջ խնայված փողերով, որը նա աշխատել է իլիկով թել մանելով: Դժվար է ասել, թե որքան ճշմարտություն կա այս ավանդազրույցի մեջ, սակայն ավելի ճշմարիտն այն է, որ այդ վանքի տարիքը պառավի տարիքից էլ շատ ավելի շատ է՝ հիմնված անհիշելի ժամանակներից:

Իլիկավանքում տարբեր տարիներին հնագիտական ու ճարտարապետական ուսումնասիրություններ են կատարել հնագետներ Ստեփան Մնացականյանը, Վահագն Գրիգորյանը, Սիմոն Հակոբյանը, Հովիկ Սանամյանը, այլ մասնագետներ:

Ոմանք այն համարում են 7, ոմանք՝ 9-րդ դարերի կառույց՝ հանդես գալով տարբեր հիմնավորումներով: Իր գոյության տեւական դարերի ընթացքում այն քանիցս ենթարկվել է ձեւափոխությունների կամ նորոգումների: Իլիկավանքի մասին հիշատակել է Ղեւոնդ Ալիշանը:

Ստեփան Մնացականյանը մեր իրականության մեջ եղել է առաջին ճարտարապետը, ով անդրադարձել է այս վանքի ճարտարապետական առանձնահատկություններին: Նրա ուսումնասիրությամբ՝ Իլիկավանքը համարվում է յոթերորդ դարի կառույց:

«Պահպանվել են գմբեթը եւ գմբեթակիր կամարներն իրենց հենարաններով: Գմբեթատակ քառակուսուց դեպի գմբեթ անցումն իրականացված է երկաստիճան տրոմպների միջոցով: Քանդված խաչաթեւերի պատերն ուշ միջնադարում փոխարինվել են ճեղքված բազալտից շարված պատերով, եւ հուշարձանը դրսից ստացել է ուղղանկյուն ուրվագիծ»,- նկարագրել է Ստեփան Մնացականյանը:

Իլիկավանքը 1983 թվականին ուսումնասիրել եւ վկայագրել է Վահագն Գրիգորյանը՝ նրա հիմնական թվագրությունն արդեն տեղափոխելով 9-րդ դար:

2002 թվականին եկեղեցին ուսումնասիրել եւ նկարագրել է Հակոբ Սիմոնյանը՝ 2001-2002 թվականներին Սեւանի ավազանի հուշարձաններն ուսումնասիրող հայ-իտալական ծրագրի շրջանակում: Հայ Առաքելական եկեղեցու Գեղարքունիքի թեմի աջակցությամբ եւ Լանջաղբյուրի համայնքի միջոցներով 2010 թվականին կազմվել են Իլիկավանքի վերականգնման նախագծանախահաշվային փաստաթղթերը:

Իլիկավանքը ներքուստ խաչածեւ, արտաքուստ՝ քառանիստ-ուղղանկյունածեւ հատակագծով, կենտրոնագմբեթ կառույց է: Ըստ Վահագն Գրիգորյանի՝ ամբողջությամբ ավերված խաչաթեւերը վերականգնվել են հետագայում: Կառուցվածքի հյուսիսային եւ հարավային խաչաթեւերն ունեցել են ոչ թե խորանային, այլ ուղղանկյուն լուծում, փոքր խորություն, ինչի հետեւանքով կառուցվածքը ստացել է առանձնակի տեսք եւ որոշ չափով հեռացել հայկական ճարտարապետության մեջ հայտնի խաչածեւ հորինվածքներից: Խաչաթեւերի պատերն ուշ միջնադարում փոխարինվել են ճեղքված բազալտից շարված պատերով, եւ հուշարձանն արտաքուստ ստացել է ուղղանկյան ուրվագիծ: Գմբեթակիր կամարների հյուսիսային եւ հարավային թռիչքները 202 սմ են, իսկ արեւելյանը եւ արեւմտյանը՝ 220 սմ: Արեւելյան խորանը կիսաշրջանածեւ, մյուսները՝ ուղղանկյունածեւ են:

Խաչաթեւերը ծածկված են թաղերով, որոնք միանում են պատերի վերին մասերում ամրացված պարզ որմնախոյակների վրա հանգչող, գմբեթատակ քառակուսի կազմող կամարներով: Ներկա վիճակում արեւմտյան խաչաթեւն, ի տարբերություն մյուսների, ունի արեւելք-արեւմուտք շեշտված ձգվածություն, որի հետեւանքով կառույցը հատակագծում ուղղանկյունածեւ է՝ արեւելք-արեւմուտք ուղղվածությամբ: Ավագ խորանն արեւելյան խաչաթեւում է:

Իլիկավանքի թմբուկն ութանիստ է, ունի պատուհաններ արեւելյան, արեւմտյան եւ հարավային նիստերի վրա: Այն պսակված է կիսագնդաձեւ գմբեթով, արտաքուստ ծածկված ութանիստ բրգաձեւ վեղարով, որի լանջերը հանգչում են թմբուկը երիզող 25 սմ լայնությամբ պարզ քիվերի վրա: Ութանիստ թմբուկի անցումը հիմքում կլոր գմբեթին, իրականացված է նիստերի վերին անկյուններում տեղադրված ութ փոքր տրամպների միջոցով: Թմբուկի կամարաձեւ վերջավորությամբ արեւելյան, արեւմտյան եւ հարավային նիստերի վրա ձեւավորված են պարզ տրամատավոր պսակներ: Միակ մուտքն արեւմուտքից է:

Կառուցված է կրաշաղախով կապակցված, հիմնականում տեղական, հրաբխային ծագմամբ սեւ-դարչնագույն, սրբատաշ, իսկ ստորին հատվածը՝ կոպտատաշ բազալտ քարերից եւ գետաքարերից: Պատերը ներսից ծածկված են եղել կրասվաղով, որոնց վրա պահպանվել են կարմիր ներկով կատարված զարդանախշի հետքեր: Հյուսիսարեւմտյան տրոմպի մեջ պահպանվել են կարմիր գույնի ուղիղ գծեր, որոնք տրոմպի կամարը բաժանում են դեպի կենտրոն նեղացող հավասարասրուն անկյունների: Հյուսիսային պատին, խորշի կամարից վեր, պահպանվել է 9-10-րդ դարերին բնորոշ կավածեփ մի խորաքանդակ:

Ինչպես գտնում են ուսումնասիրող հնագետները՝ Իլիկավանքը ի սկզբանե եղել է հատակագծում խաչածեւ, արտաքինից ուղղանկյուն խաչաթեւերով կառույց, որի խաչաթեւերը ներսից, բացառությամբ արեւմտյան ձգված խաչաթեւի, ունեցել են կիսակլոր խորաններ՝ ծածկված գմբեթարդներով: Ելնելով կառույցի հատակագծային առանձնահատկություններից եւ ծավալատարածական լուծումներից, ինչպես նաեւ պատմահամեմատական վերլուծությունից, նրանք փաստագրել են, որ եկեղեցին պատկանում է վաղ միջնադարյան խաչածեւ, եռախորան, կենտրոնագմբեթ եկեղեցիների տիպին եւ, ամենայն հավանականությամբ, կառուցվել է 6-7-րդ կամ 9-րդ դարում: Այն եղել է Գեղարքունիքի մարզի հնագույն՝ վաղ միջնադարյան մեկուսացված մատուռներից կամ անապատներից: Վերակառուցվել էր Լենկ Թեմուրի եւ Շահ Աբասի արշավանքների միջակայքում, այն է՝ ուշ միջնադարում՝ 15-16-րդ դարերում, նախքան Շահ Աբասի կողմից հայ բնակչության տեղահանումը:

Իլիկավանքը վերականգնվել է 2011 թվականին, լանջաղբյուրցի գործարար Հրանտ Նալբանդյանի բարերարությամբ, Անդրանիկ Սարգսյանի ճարտարապետությամբ եւ Արմեն Ավետիսյանի շինարարությամբ:

Իլիկավանքի պատմությանն ու պատմամշակույթի նշանակությանն առանձնակի շուք են հաղորդում նրա շրջակայքում տարածվող կիկլոպյան դարաշրջանի ամրոցն ու հնագույն բնակատեղին:

Այն տարածվում է շուրջ 30 հեկտարի վրա, սարի երեք գագաթներին եւ մերձակա լանջերին:

Իլիկավանքի բերդշենը 1961 թվականին առաջինն ուսումնասիրել է հնագետ Գեդեոն Միքայելյանը, իսկ նրա հետ աշխատող Գուրգեն Գուրգենյանը եւ Վահագն Իսրայելյանը պատրաստել են միջնաբերդի հանույթը: 2001-2002 թվականներին բերդշենը հանգամանալից ուսումնասիրել է Սեւանի ավազանի հուշարձաններն ուսումնասիրող հայ-իտալական արշավախումբը, որը ղեկավարել են հնագետներ Սիմոն Հմայակյանը եւ Ռաֆայելե Բիշոնեն: 2001 թվականին հուշարձանը չափագրել է ճարտարապետ Հովհաննես Սանամյանը, 2002-ին՝ Լուսինե Նիկողոսյանը, որոնց հետ աշխատել է գեոդեզիստ Ժորա Շեկյանը: Ճարտարապետական չափագրումների եւ թեոդոլիտային տեղահանույթի համադրությամբ կազմվել է բերդշենի գլխավոր հատակագիծը: Հակոբ Սիմոնյանը դասակարգել է բավականին հարուստ վերգետնյա գտածոները եւ դրանց հիման վրա կազմել հուշարձանի կառուցապատման եւ բնակեցման փուլերի ժամանակագրական սանդղակը: Առանձին հոդվածում նա դիտարկվել է բերդշենի կառուցապատման փուլերը եւ սկզբունքները:



Ըստ Գեդեոն Միքայելյանի կոմից կատարված ուսումնասիրման արդյունքների՝ Իլիկաբվանքի շրջակայքում երեւում են կիկլոպյան ամրոցի ու բնակատեղիի հետքեր, որի ամենաբարձր տեղամասում մասամբ պահպանվել է միջնաբերդը: Աարահարթի արեւմտյան լանջը թեք է եւ վերջանում է մոտ 20 մետր բարձրություն ունեցող քարային ուղղաձիգ զանգվածով, նրա ստորին մասում որոշակի երեւում են քարանձավների մուտքերը, որոնք լցված են քար ու հողով: Պարզ երեւում են մուտքերի պատերը եւ նրանց ծածկերը, որոնք մեծ սալաքարերով են կառուցված: Միջնաբերդը գրավում է բարձունքի առավել հարթ, սակայն գերիշխող մասը: Ի տարբերություն մյուս ամրոցներում եղած միջնաբերդերի, այստեղ բնակարաններ ավելի շատ կան, ու դրանք կանոնավոր կերպով շարված են հիմնականում արեւելյան պարիսպների տակ՝ օգտագործելով պարիսպը որպես արտաքին պատ:

Միջնաբերդի պարիսպների վրա Գեդեոն Միքայելյանը հայտնաբերել է ինը աշտարակ, որոնք դասավորված են անկյուններում, մուտքերի մոտ եւ այն տեղերում, որտեղից ավելի լավ է երեւում շրջապատը: «Բարձունքը, որի վրա գտնվում է ամրոցը, արեւմտյան կողմում բարձր է իր շրջապատից ավելի քան 150 մետր, դեպի արեւելք աստիճանաբար իջնում է մինչեւ հանդիպակաց լեռան ստորոտները, որտեղ կան բազմաթիվ դամբարաններ: Բարձունքը դեպի հարավ ձգվում է մի քանի կիլոմետր, մինչեւ Գեղարքունիք գյուղը: Արեւմտյան լանջը գրեթե ուղղահայաց թեքություն ունի: Ամրոցն ավելի անխոցելի դարձնելու համար այն երեք կողմից շրջապատված է երեք, տեղ-տեղ 4 շարք պարիսպներով: Միջնաբերդի առաջին ու հիմնական պարիսպը 5 մետր լայնություն ունի, մյուս շարքերի պարիսպներն աստիճանաբար նեղանում են: Քարերը շարված են առանց շաղախի, երկշար, որոնց մեջ լցված է մանր քար ու խիճ: Պարիսպների միջանկյալ տարածությունների վրա նկատելի են բազմաթիվ բնակարանների հետքեր: Ամրոցն իր չորս պարիսպներով զբաղեցնում է մոտ ութ հեկտար տարածություն, իսկ միջնաբերդը՝ շուրջ 1 հեկտար: Բացի դրանից, պարիսպներից դուրս կան մեծ քանակության բնակարանների ավերակներ, որոնք, անշուշտ, կապված են եղել ամրոցի հետ:

Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ Իլիկավանքի ամրոցն ունեցել է ջրամատակարարման համակարգ: Նրա հարավարեւելյան ուղղությամբ, մեկուկես կիլոմետր հեռավորության վրա, կա երկու ամբարտակ, ուր ուր հավաքվել են ձնհալի, անձրեւների կամ հեռավոր աղբյուրների ջրերը՝ ամրոցն ու շենը ջրով ապահովելու ուղղությամբ: Արտաքին՝ չորրորդ պարիսպը, որը շրջանցում է ամրոցը, ունի մուտք աջուձախ կողմերում, իսկ միջանկյալ պարիսպների ու գլխավոր պարսպի վրա կան հզոր աշտարակների հետքեր: Ամրոցից դեպի հարավ ու հարավարեւելք կիկլոպյան տիպի բնակավայրերի հետքեր կան, որոնք զբաղեցնում են շուրջ 70 հեկտար տարածություն: Այդտեղ նկատելի են պարիսպների հետքեր, որոնք շրջապատում են կամ ամբողջ բնակատեղին, կամ առանձին բնակարանների խմբեր: Բնակատեղիներն իրենց շրջապատում ունեն դամբարանադաշտեր»,-գրում է Գեդեոն Միքայելյանը: Վերջինիս կարծիքով՝ Իլիկավանքի ամրոցի ու շենի հետ ընդհանուր կապ կարող է ունենալ նաեւ Լանջաղբյուրի տարածքում գտնվող «Ձորի խարապա» կիկլոպյան բնակավայրը:

Ըստ հայ-իտալական միացյալ արշավախմբի ուսումնասիրության արդյունքների՝ աշտարակատիպ որմնահեցերը պարսպի զանգվածից դուրս են խոյանում 2,20-2,50 մետր եւ ունեն 7,5-8, մետր ճակատային լայնք: Արեւմտյան հատվածում միջնաբերդի պարսպաշղթան անցնում է ուղղաձիգ կտրված ժայռի գագաթով: Հետագայում միջնաբերդն ընդարձակել են դեպի արեւմուտք՝ մինչեւ բերդշենն օղակող երրորդ դարավանդ-պարսպաշղթան, որի արդյունքում այստեղ ձեւավորվել է երկու շարք պարսպապատերով շրջափակված տարածք: Այս հատվածի պաշտպանությունն առավել արդյունավետ դարձնելու համար տարածքն արեւելքից արեւմուտք ձգվող ուղիղ պատաշարերով ջլատել են երեք մասի: Սրանցից կենտրոնականի վրա բացվում է բուն միջնաբերդից սկսվող ժայռափոր գաղտնուղին, որի մուտքը ձեւավորված է մեծ սալաքարերով: Նախկին հետազոտողները, մոտ 20 մետր ուղղաձիգ կտրվածքով ժայռի ստորոտում բացվող գաղտնուղու ելքն ընկալել են որպես քարանձավի մուտք:

Ի դեպ, այս կարծիքը հաստատվում է մեկ այլ ուսումնասիրությամբ, որը կատարվել է 2024 թվականի ապրիլ-հուլիս ամիսներին, «Հանուն կայուն ապագայի զարգացման» նախաձեռնող խմբի կողմից, Լալա Մկրտչյանի ղեկավարությամբ :

-«Գավառի քարանձավների վերակենդանացում եւ քարտեզագրում» ծրագիրն իրականացվել է Գավառ համայնքում, որի նպատակն էր՝ բացահայտել, չափագրել ու քարտեզագրել Գավառի տարածաշրջանի առնվազն 5 քարանձավ, որոնք կարող էին ծառայել տեղի բնակչությանը եւ դրանցից առնվազն 1-ը հետագայում դարձնել զբոսաշրջային վայր:

Ծրագրի ընթացքում նախատեսված 5 քարանձավների փոխարեն հետազոտվել, չափագրվել ու քարտեզագրվել է թվով 6 քարանձավ:

/շարունակությունը՝ էջ 5-ում/

17.qxd 23/08/2026 15:01 Page 5

ԻԼԻԿԱՎԱՆՔՆ ՈՒ ՆՐԱՆ ՇՐՋԱՊԱՏՈՂ ԲԵՐԴՇԵՆԸ

/սկիզբը՝ էջ 4-ում/

Ամենահետաքրքիրներից մեկը Իլիկավանքի կիկլոպյան ամրոցի քարանձավն էր, որը ոչ թե բնական քարանձավ, այլ գաղտնուղի է: Չափագրվեց քարանձավի մուտքային հատվածը՝ 20 մետր, որտեղից բացվում են 3 սրահներ: Սակայն գաղտնուղու մյուս ելքերը փակված են քարերով, որի պատճառով աշխատանքները լիակատար չեն կարողացել իրականացվել,-հավաստեց Լալա Մկրտչյանը:

Միջնաբերդի ներսում պահպանվել են ինչպես միմյանց հպված, այդպես էլ արտաքին պատերով պարսպապատին հպված, առանձին կառուցված ուղղանկյուն եւ քառանկյուն հատակագծերով տների հիմնապատեր, որոնք ունեն մի քանի տասնյակից մինչեւ մի քանի հարյուր քառակուսի մետր մակերես: Առանձին կանգնած մեծ տները կառուցված են զանգվածեղ, երկշարք դրված որձաքարերով եւ ունեն 2-3 մետր լայնություն: Տները միջնապատերով բաժանվում են մի քանի սենյակների: Սրանք հավանաբար նախատեսված էին մեծ գերդաստանների համար:

Միջնաբերդից դեպի արեւելք իջնող թեքդիր լանջի վրա չորս շարք հենապատ-պարսպաշղթաներ են: Միդիս շարվածքով՝ ճակատները զանգվածեղ քարերով ձեւավորած պարսպապատերի լայնքը 2,5-3 մետր է եւ ավելի: Հյուսիսային կողմում ամրոցի պարիսպները եւ սրանից դուրս կառուցված ուղղանկյուն հատակագծով շինությունները գրեթե հասնում են Իլիկավանքին:

Դարավանդ-պարսպաշղթաներից երրորդը շրջափակում է ամբողջ բերդշենը: Սրա ներսում՝ հյուսիսային եւ հարավային մասերում ընդարձակ, մինչեւ 800 քմ մակերեսով, երկշարք, 2-3 մետր լայնությամբ պատերով տներ են, որոնք խաղաղ ժամանակ կարող էին բնակեցվել, իսկ ռազմական բախումների ժամանակ արդեն կատարել են նաեւ պաշտպանական գործառույթ՝ ծառայելով որպես զինված ջոկատների կայանատեղիներ: Միջնաբերդի հյուսիսային եւ հարավային, համեմատաբար դյուրամատչելի կողմերում կառուցված այս ընդարձակ տները միմյանցից միջին հաշվով 10-15 մետր հեռավորության վրա են գտնվում: Սրանք այնպես են դասավորված, որ կազմել են տեղանքը պաշտպանող կառույցների համակարգ, որը կարող էր ջլատել դեպի բերդշեն արշավող թշնամու ջոկատները, եւ դղյակներում ամրացված պաշտպանները հաջողությամբ կարող էին պայքարել միմյանցից զատված խմբերի դեմ: Այս դղյակ-հենակետերը ձեւավորել են ինքնատիպ պաշտպանական համակարգ, ինչն այլ բերդշեներում ուսումնասիրող հնագետներին չէ:

Պահպանվել են նաեւ հին ճանապարհների մնացորդներ: Դեպի բերդշեն տանող հիմնական ճանապարհը եղել է հարավից: Մինչեւ 5 մետր լայնությամբ ճամփան երկու կողմերից եզերված է պարսպապատերով: Սա փաստում է, որ այս ճանապարհով կարող էին երթեւեկել սայլեր եւ մարտակառքեր:

Երրորդ դարավանդ-պարսպաշղթայի հարավային կողմում ձեւավորված մուտքը պաշտպանված է եղել մի կողմից որմնահեցով, մյուս կողմից՝ առաջ դրված

պարսպապատով, որոնց շնորհիվ ձեւավորվել է ներփակ տարածք՝ քարե պարկե: Այնուհետեւ ճամփան շարունակվել է դեպի միջնաբերդի հարավային պարիսպը: Միջնաբերդ տանող մուտքն ավելի նեղ է եւ ունի միջանցքատիպ նախամուտք: Միջնաբերդի մեկ այլ մուտք, դարձյալ պատաշարերով եզերված, պահպանվել է առաջին դարավանդի հյուսիսային մասում:

Բերդշենից դեպի բարձրադիր գագաթի ռելիկտային լճերն ընկած տարածքում դիտվում են առանձին կառույցների ավերակներ եւ փոքրիկ քարակուտակումներ: Սրանցից երեքը հստակ բրոնզի դարի փոքր դամբանաբլուրներն են: Ժամանակին այստեղ դիտվել են բազմաթիվ դամբարաններ:

Դատելով հուշարձանի կառուցվածքից եւ պաշտպանական բարդ համակարգից, Իլիկավանքի բերդշենը եղել է Ուդուրի-էթիունի երկրի հզորագույն ամրոցներից: Միայն պարսպապատ տարածքը, նախնական դիտարկումների համաձայն, ներառում է ավելի քան 10 հեկտար մակերես: Իսկ պաշտպանվող տարածքն ու շենը միասին ունեցել են առնվազն 20-25 հեկտար բնակեցված տարածք:

Բերդշենի նախորդ ուսումնասիրողներն Իլիկավանքի ամրոցը վերագրել են բրոնզ/վաղ երկաթի շրջափուլին՝ մ.թ.ա. երրորդ հազարամյակի կեսից մինչեւ մեր թվարկության 8-րդ դար:

Սակայն հայ-իտալական հնագիտական միացյալ արշավախմբի եզրակացությամբ, հենվելով հուշարձանի տարածքում հայտնաբերված վերգետնյա գտածոների անալիզի ու քննարկման արդյունքների վրա, Իլիկավանքի բերդշենը համարվում է Ուդուրի-էթիունի երկրի միջին բրոնզի եզրափակիչ փուլի, ապա ուշ բրոնզ-վաղ երկաթի դարի խոշորագույն քաղաքատեղիներից մեկը, որը հիմնարկվել է միջին բրոնզի դարում, ծաղկում ապրել ուշ բրոնզի դարի վաղ փուլում եւ հարատեւել ընդհուպ ուրարտական արշավանքերը:

Իլիկավանքի բերդշենից, ինչպես ձեռքի ափի մեջ, հստակորեն երեւում է Գավառ համայնքի տարածքը՝ իր բնակավայրերով հանդերձ, Սեւանա լիճն ու նրան շրջապատող լեռները, հրավից հյուսիս, արեւելքից արեւմուտք ձգվող ճանապարհները, մարդկային տեղաշարժերը: Հնագետները համարում են, որ Իլիկավանքի բերդշենը եղել է Վելիքուխի երկրի պաշտպանական հզոր համակարգերից մեկը նրա հարավային կողմում, որը պատնեշել է թշնամական բանակների մուտքը թե՛ հարավից, թե՛ հարավարեւելյան ու հարավարեւմտյան կողմերից: Քաղաքատեղին տեւական ժամանակաշրջանում հիմնվել, զարգացել ու գոյատեւել է շնորհիվ այնպիսի գործոնների, ինչպիսիք եղել են ջրի առատ պաշարները, ձկան ու վայրի կենդանիների առատ որսը, անասնապահության համար չափազանց նպաստավոր ալպյան արոտները, երկրագործության համար նպաստավոր հողատարածքները, տարանցիկ ճանապարհները, մետաղամշակության ու արհեստների տիրապետումը, մերձակա պետական միավորումների կամ ցեղային միությունների հետ հաստատված առեւտրատնտեսական հարաբերությունները:

Հուշարձանն ուսումնասիրող հնագետների կարծիքով՝ այս բերդշենը կործանվել է Վանի թագավորության կողմից ձեռնարկված ռազմական արշավանքների արդյունքում, սակայն չենք բացառում, որ մարդիկ այստեղ շարունակել են ապրել նաեւ հետուրարտական դարաշրջանում:

Նորից վերադառնանք Իլիկավանքի կամ Պառավի վանքի տարիքին: Որքան էլ մեր հնագիտական միտքը ջանում է նրա հիմնադրման թվականը կապել 6-9-րդ դարերի հետ, մի բան արդեն ակներեւ է, որ այն հաստատապես բարձրացել է մինչքրիստոնեական կամ հեթանոսական տաճարի խորտակված հիմքերի վրա, քանի որ հազամյակներ գոյատեւած բերդշենը, որի հյուսիսային պարսպից այն կողմ տարածվող տները հասնում են մինչեւ Իլիկանավանքի մատույցներ, չէր կարող չունենալ հավատի տուն՝ հին հայկական կրոնին բնորոշ տաճար կամ մեհյան: Իլիկավանքի հյուսիսային ստորոտում, մի քանի տասնյակ մետր հեռավորությամբ, նկատելի են բնակատեղիի հետքեր, որոնք եւս այս հսկայական հուշարձանի՝ վանքի ու բերդշենի մի մասն են ու հաստատում են մեր կարծիքն առ այն, որ հավատի այս տան տարիքը մոտավորապես կարող է հավասար լինել բերդշենի տարիքին՝ սկզբնավերվելով պատմագիտությանը հայտնի միջին բրոնզի դարում ու հասնելով մինչեւ մեր օրերը, իհարկե, հայ ժողովրդի համար պաշտելի սրբավայրի ու ուխտավայրի կարգավիճակով:

Իլիկավանքի բարձունքից հստակորեն ուրվագծվում է Հին Հայաստանի այն զորավոր ուժը, որից սկզբնավորվել են մեր հեռավոր նախնիները, որոնցից ծնունդ ենք առել մենք՝ Հայոց աշխարհի զավակներս՝ հայկական ինքնությունն անխախտ պահելու սուրբ առաքելությամբ:

Խոսրով Խլղաթյան

ԱՍՏՂԱԶՈՐՈՒՄ ՊԱՀՊԱՆՎՈՒՄ Է ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԱՅՍՐ ՆԻԿՈԼԱՅ ԱՌԱՋԻՆԻ ՊԱՏԿԵՐՈՎ «ԱՐԻՈՒԹՅԱՆ» ՄԵԴԱԼ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Աստղաձոր գյուղում՝ Հայոց բանակի նախկին զինծառայող, պահեստազորի կապիտան Մուշեղ Սիմոնյանի տանը, պահվում է Ռուսաստանի կայսր Նիկոլայ Առաջինի դիմապատկերով «Արիության» մեդալ, որը շնորհվել է 1829 թվականին, Թուրքիայի Ալաշկերտ գավառի Կումլիպուճախ գյուղի տանուտեր, այնտեղից գաղթած ու Սեւանա լճի հարավային ափին բնակություն հաստատած Մելիք Պետրոս Պահլավունուն:

Ինչպես տեղեկացրեց Մելիք Պետրոս Պահլավունու թոռան թոռ Մուշեղ Սիմոնյանը, տեղեկություններ են պահպանվել այն մասին, որ Մելիք Պետրոս Պահլավունին այդ Արիության մեդալին արժանացել է ռուսական բանակին կամավորագրվելու ու նրա շարքերում ջոկատի հրամանատարի կարգավիճակով մարտնչելու համար:

-Հետխորհրդային տարիներին հրատարակված «Բագրեւանդ» թերթում կա տեղեկություն այն մասին, որ Մելիք Պետրոս Պահլավունին կամավորագրվել է ռուսական բանակին, մարտնչել նրա շարքերում, որի համար ցարական կառավարության կողմից արժանացել է «Արիության» մեդալի: Այդ մասին մեր մեծ գերդաստանի մարդիկ տեղեկացել են նաեւ բանավոր զրույցների միջոցով, որը փոխանցվել է պապից թոռ: Մելիք Պետրոս Պահլավունու հետ 1830 թվականին Ալաշկերտի Կումլիպուճախ գյուղից գաղթել ու Աստղաձոր գյուղում բնակություն են հաստատել նաեւ Փուրթո Փուրթոյանը, Ղազար Բաղդասարյանը, Անտոն Քամալյանը, Տեր-Ստեփան Հակոբյանը, Սրքե Սրքեյանը, Նավո Խոչոյանը, Գափո, Սուքո, Հովհան եղբայրները, Հոխան Հոխանյանը, Մարկոսը, ումից ծագել են Եսայան, Գրիգորյան եւ Արշակյան տոհմերը, Չոբան Առաքյալը: Հարթինը նրանց հետ եկել է Մուշից: Իմ նախապապ Մելիք Պետրոս Պահլավունին գաղթել է մեծաքանակ անասնահոտերով՝ իր հետ էրգրից բերելով նաեւ 2 սուրբ գիրք՝ 1700-ական թվականներին էջմիածնի տպարանում տպագրված «Աստվածաշունչը» եւ Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմը, որոնք պահպանվում էին Մեծ տանը, ուր առաջին անգամ հանգրվանել էին մեր պապերը: Ցավոք, շուրջ երկու տասնամյակ առաջ անհայտ անձինք գողացան գրքերը, սակայն մեզ հաջողվել է գոնե մասունքի պես պահպանել Մելիք Պետրոս Պահլավունուց հուշ մնացած այս հուշամեդալը: Այն պատրաստված է մաքուր արծաթից եւ կշռում է 55 գրամ: Բնական է, որ նման մեդալը հենց այնպես չէր կարող շնորհվել, եթե դրա դիմաց Մելիք Պետրոս Պահլավունին չցուցաբերեր բացառիկ ծառայություն ռուսական կողմին: «Արիության» մեդալը փոխանցվել է սերնդեսերունդ ու հասել ինձ: Այն եղել է կրծքանշան, որն ամրացվել է հագուստի վրա: Մեդալի պահպանությունն ավելի հուսալի դարձնելու համար նրա վրա ոսկերչի միջոցով ամրացնել եմ տվել 1800-ական թվականների ռուսական 20 ռուբլու վրայի արծաթյա գերբը, որի մեջ հագնում է արծաթյա շղթան՝ նաեւ պարանոցի վրա կրելու համար: Անառարկելի է, որ այս մեդալն առանց համապատասխան փաստաթղթի շնորվել չէր կարող, սակայն, ցավոք, այդ փաստաթուղթը մեզ չի հասել: Ես ժամանակին գրավոր հարցումներ եմ արել ԽՍՀՄ արխիվներին, սակայն պատասխան չեմ ստացել: Այդուհանդերձ, մի բան հաստատ ու անառարկելի է , որ այս մեդալը շնորհված է եղել Մելիք Պետրոս Պահլավունուն՝ մերօրյա Աստղաձոր գյուղի հիմնադրին»,-ներկայացրեց Մուշեղ Սիմոնյանը:

Մեդալի դեմի մասում ռուսերեն տառերով գրված է. «Աստծո ողորմածությամբ Նիկոլայ Առաջին Կայսր եւ ինքնակալ համայն Ռուսիո»: Մեդալի հետեւի մասում գրված է. «Արիության համար»:

Խոսրով Խլղաթյան



ՓԱՄԲԱԿՈՒՄ 2018-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 6 ԾՐԱԳԻՐ Է ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ

Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Փամբակ գյուղում սուբվենցիոն եւ պետական ծրագրերի շրջանակներում 2018-2025 թվականների ընթացքում սոցիալ-տնտեսական եւ կենսական նշանակության 6 ծրագիր է իրականացվել, որոնց ուղղությամբ կատարված կապիտալ ներդրումները կազմել են 674 միլիոն 758 հազար դրամ:

Իրականացված ծրագրերից 5-ը սուբվենցիոն են՝ 58 միլիոն 758 հազար դրամ ընդհանուր արժեքով, 1-ը՝ պետական՝ 616 միլիոն դրամ արժեքով:

Իրականացված ծրագրերի արդյունքում Փամբակում 2018-2025 թվականների ընթացքում կառուցվել է 4866 մետր խմելու ջրատարի ներքին ու արտաքին ցանցեր, 1000 մետր արտաքին լուսավորության ցանց, հիմնանորոգվել 5500 մետր հանրապետական նշանակության ճանապարհ:

Պետական ծրագրով 2019 թվականին հիմնանորոգվել է Շողակաթ-Վարդենիս հանրապետական նշանակության ավտոճանապարհի՝ Փամբակի վարչական տարածքով անցնող հատվածը, շուրջ 616 միլիոն դրամ արժեքով:

«Գեղամա աշխարհ»

17.qxd 23/08/2026 15:01 Page 6

ՀԻՄՆԱՆՈՐՈԳՎՈՒՄ Է ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ՓՈՂՈՑԻ 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔԸ, 1-ԻՆ ՓԱԿՈՒՂԻՆ, 4-ՐԴ ՇԵՆՔԻ ԲԱԿԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԸ

Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքում ՀՀ կառավարության կողմից 2026 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում արդեն ավարտին են մոտենում Ազատության փողոցի առաջին նրբանցքի, նույն փողոցի 4-րդ շենքի բակի եւ առաջին փակուղու հիմնանորոգման աշխատանքները:

Ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 72 միլիոն 323 հազար դրամ, որի 45 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 55 տոկոսը՝ Գավառի համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսված է 690 մետր երկարությամբ նրբանցքի եւ փակուղու ասֆալտապատում, 496 քմ տարածքով մայթերի կառուցում՝ բազալտե եզրաքարերով եւ բետոնե սակիկներով, ջրահեռացման համակարգի կառուցում:

Շինարարական աշխատանքները սկսվել են 2026 թվականի հունիսից եւ 2026 թվականի օգոստոսի 3-ի դրությամբ արդեն իրականացվել շուրջ 90 տոկոսով:

Ճանապարհաշինական աշխատանքները կարեւորում են ոչ միայն տարածքում ապրողները, այլեւ այս հատվածով հաճախ երթեւեկող քաղաքացիները: Տարածքի փոշին, ցեխը եւ այլ անհարմարություններ արդեն անցյալում են: Ճանապարհաշինարարների հավաստմամբ՝ փողոցները շուտով շահագործման կհանձնվեն:

Ալվարդ Մանուկյան

ԿԱՅԱՑԵԼ Է ԶՈՀՐԱՊ ԹՈՎՄԱՍՅԱՆԻ «ԿՅԱՆՔԻ ԳՈՒՅՆԵՐ» ԳՐՔԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԸ

Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքի Մհեր Մկրտչյանի անվան մշակույթի պալատում տեղի է ունեցել վարդենիսցի նկարիչ, քանդակագործ եւ մանկավարժ Զոհրապ Թովմասյանի «Կյանքի գույներ» գրքի շնորհանդեսը:

Ինչպես տեղեկացրին Վարդենիսի համայնքապետարանի աշխատակազմից, գրական-մշակութային ցերեկույթին մասնակցել են Վարդենիս համայնքի ղեկավար Աիարոն Խաչատրյանը, Վարդենիսի եւ տարածաշրջանի հոգեւոր հովիվ Տեր Հարություն քահանա Հունանյանը, պետական կառույցների ներկայացուցիչներ, մշակույթի, կրթության եւ արվեստի գործիչներ, ընկերներ, գործընկերներ, հարազատներ եւ բազմաթիվ արվեստասերներ:

Միջոցառման ընթացքում ներկայացվել է Զոհրապ Թովմասյանի ստեղծագործական ուղին, նրա բազմամյա գործունեությունը՝ որպես նկարիչ, քանդակագործ եւ մանկավարժ, ինչպես նաեւ «Կյանքի գույներ» գրքի գաղափարն ու բովանդակությունը:

Համայնքի ղեկավարը շնորհավորել է երիտասարդ ստեղծագործողին, ինչպես նաեւ արժանացրել պատվոգրի՝ մշակութային կյանքի զարգացման գործում ունեցած ավանդի, ստեղծագործական գործունեության եւ գրական աշխատանքներ ծավալելու համար:

Ելույթներով հանդես են եկել նաեւ հյուրերը՝ արժեւորելով հեղինակի արվեստագիտական եւ մշակութային վաստակը, նրա ներդրումը Վարդենիսի մշակութային կյանքի զարգացման եւ երիտասարդ սերնդի գեղագիտական դաստիարակության գործում: Շնորհանդեսն անցել է ջերմ ու ստեղծագործական մթնոլորտում՝ ուղեկցվելով գրքից հատվածների ընթերցմամբ, երաժշտական կատարումներով եւ հեղինակի հասցեին հնչած շնորհավորանքի ու գնահատանքի խոսքերով:

Գրքում ներկայացված են Զոհրապ Թովմասյանի հեղինակած կտավները, չափածո եւ արձակ ստեղծագործությունները եւ խոհերը իր ապրած կյանքի մասին:

Խոսրով Խլղաթյան

ՍԵՎԱՆՑԻ ԾԱՆՐՈՐԴՆԵՐԸ ԵՐԿՈՒ ՄԵԴԱԼ ԵՆ ՆՎԱՃԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԾԱՆՐԱՄԱՐՏԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հուլիսի 23-25-ը «Սպորտի կառավարման կենտրոնի» Սիմոն Մարտիրոսյանի անվան ծանրամարտի մարզադպրոցում, որը գտնվում է Արմավիրի մարզի Զրառատ համայնքում, տեղի է ունեցել Հայաստանի 2026 թվականի երիտասարդների առաջնությունը, որտեղ փայլուն են հանդես եկել սեւանցի ծանրամարտիկներ Ալինա Սուքիասյանը եւ Հովհաննես Հովհաննիսյանը:

77 կգ քաշային կարգում սեւանցի ծանրամարտիկ, ծանրամարտի մարզիչ Գառնիկ Աբրահամյանի սան Ալինա Սուքիասյանը երկամարտի 223 կգ արդյունքով նվաճել է չեմպիոնի կոչումը:

Տղաների մրցապայքարում 75կգ քաշային կարգում Հայաստանի առաջնության երկրորդ մեդալակիր է դարձել բազմաթիվ անգամ Հայաստանը պատվով ներկայացրած ու մեդալներ նվաճած Հովհաննես Հովհաննիսյանը՝ երկամարտի 288 կգ արդյունքով:

Շնորհավորում ենք մեր մրցանակակիրներին, նրանց մարզչին, Ն. Դագարյանի անվան մանկապատանեկան մարզադպրոցի տնօրինությանը եւ աշխատակազմին, քանի որ այս ու նախորդ նվաճումները կապված են ջանադիր ու նպատակասլաց աշխատանքի, հաղթանակի կամքի դրսեւորման հետ: Սեւան համայնքը պատվով ու մեծարանքով է ընդունում իր շնորհալի ու հերթական հաղթանակները կերտած մարզիկներին:

Արմինե Ղուկասյան

ՀԱՆԴԻՊԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ ՎԵՐԱԲԱՑՎԵԼ Է ԳԱՎԱՌԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆԸ

Գեղարքունիքի մարզկենտրոն Գավառ քաղաքում օգոստոսի 10-ին տեղի է ունեցել Ֆրունզե Դովլաթյանի անվան մշակույթի տան վերաբացման հանդիսավոր արարողությունը:

Միջոցառմանը ներկա են եղել Գավառ համայնքի ղեկավար Գուրգեն Մարտիրոսյանը, Հայ Առաքելական եկեղեցու Գեղարքունյաց թեմի հոգեւոր դասի, համայնքային իշխանությունների, համայնքի հիմնարկ- ձեռնարկությունների, կրթամշակութային հաստատությունների ներկայացուցիչներ, հյուրեր:

Վերաբացման արարողությունն ուղեկցվել է Գավառ համայնքի արտադպրոցական հաստատությունների սաների ձեռքի աշխատանքների ցուցադրություններով եւ համայնքի՝ երաժշտական ու արվեստների դպրոցների համույթների, անհատ կատարողների եւ այդ հաստատությունների շնորհալի շրջանավարտների ելույթներով:

Բացման հանդիսավոր խոսքով հանդես է եկել Գավառի մշակույթի տան տնօրեն Լիաննա Միքայելյանը, ով իր խոսքում շնորհակալություն է հայտնել մշակույթի տան շենքի հիմնանորոգման գործում աջակցություն ցուցաբերած եւ ներդրումներ իրականացրած անձանց ու կազմակերպություններին եւ բարի ընթացք մաղթել մշակույթի տան գործունեությանը:

Գավառի մշակույթի տունը հիմնանորոգվել, կահավորվել եւ ժամանակակից տեխնիկայով վերազինվել է սուբվենցիոն ծրագրերի շրջանակում, ինչպես նաեւ Գավառ համայնքի բյուջեից հատկացված միջոցներով:

Ալվարդ Մանուկյան

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ ՀԱՑԱՀԱՏԻԿԻ ԵՎ ԱՆԱՍՆԱԿԵՐԻ ԲԵՐՔԱՀԱՎԱՔԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Գեղարքունիքի մարզի տնտեսություններում շարունակվում են հացահատիկի եւ անասնակերի բերեւաքահավաքի աշխատանքները:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության եւ շրջակա միջավայրի պահպանության վարչությունից, 2026 թվականի օգոստոսի 18-ի դրությամբ մարզի տնտեսություններում արդեն կուտակվել է 78 հազար 510 տոննա խոտ, 2652 տոննա ծղոտ:

Նույն օրվա դրությամբ հնձվել է 1702 հեկտար աշնանացան ցորենի, 544,4 հեկտար գարնանացան ցորենի, 2372 հեկտար գարու արտեր, ինչի արդյունքում հավաքվել է 4270 տոննա աշնանացան ցորենի, 1150,8 տոննա գարնանացան ցորենի, 4995 տոննա գարու բերք:

Հեկտարի միջին բեքատվությունը կազմում է 20-25 ցենտներ:

Հացահատիկի եւ անասնակերի բերքահավաքը Գեղարքունիքում կշարունակվի մինչեւ սեպտեմբերի առաջին տասնօրյակը:

Խոսրով Խլղաթյան

ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՄԻՏԵՆ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՆՎԻՐԱԲԵՐԵԼ Է 18.5 ԿԻԼՈՎԱՏՏ ՀԶՈՐՈՒԹՅԱՆ ՄՈՒՐՃԱՅԻՆ ԱՂԱՑ



Կարմիր խաչի միջազգային կոմիտեն Վարդենիս համայնքին նվիրաբերել է 18?5 կիլովատտ հզորության մուրճային աղաց:

Ինչպես տեղեկացրին Վարդենիսի համայնքապետարանի աշխատակազմից, օգոստոսի 10-ին Վարդենիս համայնքի ղեկավար Աիարոն Խաչատրյանն ընդունել է Հայաստանում Կարմիր խաչի միջազգային կոմիտեի պատվիրակության ներկայացուցիչներին՝ Հաղորդակցման եւ կանխարգելման ծրագրերի ղեկավար Զառա Ամատունուն, Տնտեսական անվտանգության ծրագրերի ղեկավար Ստեփան Գրիգորյանին եւ նույն բաժնի ներկայացուցիչ Նարինե Քոչարյանին:

Հանդիպման ընթացքում քննարկվել են համատեղ իրականացվող ծրագրերն ու հումանիտար աջակցությանն ուղղված քայլերը, որոնք միտված են համայնքի տնտեսական զարգացմանը:

Համագործակցության շրջանակներում ԿԽՄԿ-ն Վարդենիս համայնքին նվիրաբերել է 18.5 կվտ հզորությամբ մուրճային աղաց (DMR Grain Crusher, 18.5kW): Սարքավորումը հնարավորություն է տալու սահմանամերձ բնակավայրերի բնակիչներին՝ ստանալ անհրաժեշտ որակի անասնակեր:

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԲՈՒԺԱՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍ ԱՄՍԻՆ ԾՆՎԵԼ Է 97 ԵՐԵԽԱ

Գեղարքունիքի մարզի ծննդօգնություն իրականացնող բուժհիմնարկներում 2026 թվականի հուլիս ամսին ծնվել է 97 երեխա՝ 56 տղա եւ 41 աղջիկ:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի առողջապահության եւ սոցիալական հարցերի վարչությունից, 41 երեխա ծնվել է Մարտունու ծննդատանը, 29 երեխա՝ Սեւանի, 18 երեխա՝ Գավառի, 7 երեխա՝ Վարդենիսի բժշկական կենտրոններում, 2 երեխա՝ Ճամբարակի առողջության կենտրոնում:

2025 թվականի հուլիս ամսին Գեղարքունիքի մարզի ծննդօգնություն իրականացնող բուժհիմնարկներում լույս աշխարհ են եկել 115 երեխա՝ 68 տղա եւ 47 աղջիկ:

ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ՄԱԿԱՐԴԱԿԸ ՆԱԽՈՐԴ ՏԱՐՎԱ ՕԳՈՍՏՈՍԻ ՍԿԶԲԻ ՀԱՄԵՄԱՏ ԲԱՐՁՐ Է ՄՆՈՒՄ 16 ՍԱՆՏԻՄԵՏՐՈՎ

Սեւանա լճի մակարդակը 2026 թվականի օգոստոսի18-ին ծովի մակերեւույթից գտնվել է 1900 մետր 72 սանտիմետր բարձրության վրա, ինչը թեեւ արդեն 9 սանտիմետրով նվազել է այս տարվա հուլիսին գրանցված 1900 մետր 81 սանտիմետր առավելագույն նիշից, սակայն 16 սանտիմետրով ավել է մնում նախորդ տարվա օգոստոսին գրանցված 1900 մետր 56 սանտիմետր նիշից:

ՀՀ ՇՄՆ «Հիդրոօդերեւութաբանության եւ մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ տեղեկագրի տվյալներով՝ 2026 թվականի օգոստոսի 18-ի դրությամբ ոռոգման նպատակներով Սեւանա լճից բաց է թողնվել 42 միլիոն 939 հազար խորանարդ մետր ջուր: Իսկ Արփա-Սեւան թունելային ջրատարով Սեւանա լիճ է տեղափոխվել 167 միլիոն 399 հազար խորանարդ մետր ջուր:

17.qxd 23/08/2026 15:01 Page 7

ԽԱՉԻԿ ԵՆԳԻԲԱՐՅԱՆ. ՀԱՅՐԵՆԻ ԵՋԵՐՔԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ՈՒ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՎԻՐՅԱԼԸ

Կյանքի 86-րդ տարում լույսի ու հավերժի ճամփորդ դարձավ Սարուխանի ևվիրյալ որդին՝ Խաչիկ Ենգիբարյանը, ում համար միշտ թանկ է եղել իր հայրենիքը, հայրենի պատմությունը, գիրն ու գրականությունը:

Խաչիկ Մաթեւոսի Ենգիբարյանը ծնվել է 1940 թվականի հունիսի 4-ին, ՀԽՍՀ Նոր Բայազետի շրջանի Սարուխան գյուղում, բազմանդամ ընտանիքում: Ունեցել է 3 եղբայր, երեք քույր: Հայրը եղել է մանկավարժ, դասավանդել է տեղի դպրոցում՝ որպես ռուսաց լեզվի ուսուցիչ եւ արժանացել «Լենինի» շքանշանի, իսկ մայրը եղել է տնային տնտեսուհի: Սովորել է տեղի թիվ 1 դպրոցում, որն ավարտել է գերազանց առաջադիմությամբ:

1957-1961 թվականներին սովորել եւ ավարտել է Նոր Բայազետի բժշկական տեխնիկումը՝բուժակ մասնագիտությամբ: 1963 թվականին ընդունվել է Երեւանի պետական Համալսարանի կենսաբանության ֆակուլտետի կենսաքիմիա բաժինը, որը ավարտել է 1970 թվականին: Նույն թվականին Խաչիկ Ենգիբարյանին ԵՊՀ-ից գործուղել են Կալինինո՝ մանկավարժական աշխատանքի, իսկ հետո 3 տարի աշխատել է Գեղարքունիքի մարզի Կարմիրգյուղի առաջին միջնակարգ դպրոցում՝ որպես քիմիա եւ կենսաբանություն առարկաների ուսուցիչ:

Խաչիկ Ենգիբարյանն իր աշխատանքի ընթացքում արժանացել է բազմաթիվ պատվոգրերի եւ շնորհակալագրերի՝ որպես շնորհալի ուսուցիչ: Նա մանկավարժական աշխատանքին զուգընթաց զբաղվել է ստեղծագործական աշխատանքով՝ հեղինակելով բազմաթիվ բանաստեղծություններ, հոդվածներ եւ պատմվածքներ: 1975 թվականին աշխատել է Երեւանի թիվ 113 դպրոցում, որից հետո՝ թիվ 99 դպրոցում: Դասավանդմանը զուգահեռ աշխատել է Սպանդարյանի շրջանի սանէպիդկայանում:

Խաչիկ Ենգիբարյանն ամուսնացել է 1974 թվականին, մանկավարժ եւ դաշնակահար Անուշ Գուրգենի Ենգիբարյան) հետ, ունեցել է 2 տղա եւ մեկ աղջիկ: Այնուհետ Սարուխան գյուղի թիվ 2 դպրոցում աշխատել է մոտ 23 տարի՝ դասավանդելով քիմիա եւ կենսաբանություն առարկաները: Դրան զուգահեռ աշխատել է նաեւ որպես զբոսավար եւ մեթոդիստ զբոսաշրջային ընկերությունում, որտեղ շփվել է տարբեր ազգերի ներկայացուցիչների հետ, ուղեկցել է բազմաթիվ զբոսաշրջիկների, եղել է նախկին ԽՍՀՄ գրեթե բոլոր երկրներում:

Խաչիկ Ենգիբարյանը եղել է Գավառում լույս ընծայվող «Խալդ» թերթի հիմնադիրն ու խմբագիրը, որը հրատարակել է սեփական միջոցներով, եւ որտեղ լույս են տեսել նրա բազմաթիվ գործեր՝ հոդվածներ, բանաստեղծություններ, հարցազրույցներ, հերոսական պատմություններ՝ Արցախյան առաջին պատերազմի հերոսների մասին, անհայտ եւ բացառիկ պատմություններ հայ հայտնի գրողների եւ արվեսագետների՝ Սերո Խանզադյանի, Վիլյամ Սարոյանի, Հովհաննես Շիրազի, Պարույր Սեւակի, Սիլվա Կապուտիկյանի հետ ունեցած հանդիպումների մասին:

Նրա ստեղծագործությունները տպագրվել են «Սովետական դպրոց», «Գրական թերթ», «Ավանգարդ» թերթերում եւ «Գարուն» ամսագրում: «Գեղամա աշխարհ» թերթին թղթակցելով՝ նա ընտրում էր հետաքրքիր, բազմաբովանդակ թեմատիկա: Արցախյան առաջին պատերազմի ժամանակ, որպես կամավոր,հաանդես է եկել տարբեր նախաձեռնություններով:

2024 թվականին «Հայաստան» հրատարակչությունում հրատարկվել է Խաչիկ Ենգիբարյանի «Իմ աշխարհը» վերնագրով գիրքը, որը բաղկացած է 2 բաժնից՝ արձակ էջեր եւ պոեզիա, որում ներառված են հեղինակի հրապարակախոսությունները, բանաստեղծությունները ու խորհրդածությունները հայ գրի եւ գրականության, իր ծննդավայր Սարուխանի, նրա մարդկանց, բնության եւ պատմական փաստերի մասին: Ուսումնասիրել է բազմաթիվ պատմական դեպքեր եւ իրադարձություններ ինչպես իր բնակավայրի, այնպես էլ հայոց աշխարհի ու հայերի անցյալի ու պատմության մասին:

Խաչիկ Ենգիբարյանն առաջինն էր, ով հասկացավ երկարամյա պատմություն ունեցող Սարուխան գյուղի պատմահնագիտական թանգարան հիմնելու անհրաժեշտության ու կարեւորության մասին, եւ նրա ջանքերով իր ծննդավայրում հիմնվեց պատմահնագիտական թանգարան, որտեղ առկա են պատմական փաստեր ու արժեքներ ներկայացնող հազվագյուտ եւ բացառիկ ցուցանմուշներ, խաչքարեր:

Խաչիկ Ենգիբարյանը մահացավ 2026 թվականի հուլիսի 26-ին՝ բազում հետաքրքիր ու յուրօրինակ մտահղացումներն ու անելիքները կիսատ թողնելով:

Նա մտքով ու հոգով կապված էր նաեւ «Գեղամա աշխարհ» թերթի հետ, ուստի եւ մենք էլ կորցրեցինք մեր լավագույն բարեկամին ու ընկերոջը, անխոնջ ստեղծագործողին, հայերենասեր ու մարդասեր մարդուն, ում հիշատակը միշտ վառ կմնա բոլորիս սրտերում:

Սարուխանի վարչական ղեկավարի աշխատակազմ
Սարուխանի թիվ 1, թիվ 2, թիվ 3 միջնակարգ դպրոցների կոլեկտիվներ
«Գեղամա աշխարհ» թերթի խմբագրակազմ

ՄԱԿ-Ի ԿՈՂՄԻՑ ՄԱՐՏՈՒՆՈՒ, ՎԱՐԴԵՆԻՍ ԵՎ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ ՆՎԻՐԱԲԵՐՎԵԼ Է ՄԻՆԻ ՏՐԱԿՏՈՐՆԵՐ

ՄԱԿ-ի Միգրացիայի միջազգային կազմակերպությունը Մարտունի Վարդենիս եւ Ճամբարակ համայնքներին նվիրաբերել է մինի տրակտորներ:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմից, ՄԱԿ-ի Միգրացիայի միջազգային կազմակերպությունը եւ Կորեայի միջազգային համագործակցության գործակալությունը Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի հետ ունեցած համագործակցության շրջանակներում մարզի համայնքներում իրականացնում է «Խոցելի համայնքներում կենսապահովման եւ տնտեսական կենսունակության խթանում» ծրագիրը, որը միտված է՝ ընդլայնելու տեղական տնտեսությունների ենթակառուցվածքները, ինչպես նաեւ կազմակերպելու կենսապահովումը ինչպես կարճաժամկետ, այնպես էլ կայուն լուծումներով:

Ծրագիրն ուղղված է տեղահանված եւ մարզի համայնքներում վերաբնակություն հաստատած տնտեսությունների եւ խոցելի խմբերի ինտեգրմանը, նպաստելով ընտանիքների եւ տեղական տնտեսությունների բարեկեցության ապահովմանը:

Սույն ծրագրի շրջանակներում օրերս Գեղարքունիքի մարզի Մարտունի եւ Ճամբարակ համայնքներին նվիրաբերվել է 75 ձիաուժ հզորության «TAVOL 754» մակնիշի 1-ական մինի տրակտորներ՝ տարբեր գործողությունների համար նախատեսված կցորդիչներով: Նախորդ տարի նման տեխնիկա նվիրաբերվել է նաեւ Վարդենիս համայնքին:

-Համայնքներում նշված տեխնիկաների շնորհիվ հնարավոր կլինի իրականացնել գյուղատնտեսական, բնապահպանական բնույթի աշխատանքներ, որոնք կնպաստեն շրջապատի սանիտարական վիճակի բարելավմանը,- ներկայացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմից:

ՍԵՎԱՆՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԵՑ ԱՌԱԳԱՍՏԱՆԱՎԱՅԻՆ ՍՊՈՐՏԻ ԱՄԵՆԱՄՅԱ ՀՈՒՇԱՄՐՑԱՇԱՐ

2026 թվականի հուլիսի 22-ից 26-ը Հայաստանի առագաստանավային սպորտի ֆեդերացիան Գեղարքունիքի մարզի Սեւան համայնքում անցկացրեց Ծովակալ Իսակովի անվան ամենամյա հուշամրցաշարը, որին մասնակցեցին առագաստանավորդներ Հայաստանից, Ռուսաստանից եւ Վրաստանից:

Սեւանի առագաստանավային սպորտի մարզաբազան եւ միությունը այս տարի եւս հուշամրցաշարին պատրաստվել են ամենայն պատասխանատվությամբ: Հայաստանի առագաստանավային սպորտի ֆեդերացիայի փոխնախագահ Սմբատ Հակոբյանը նշում է, որ սպորտաձեւի տարածման ու զարգացման համար անհրաժեշտ է ամեն ինչ անել, քանի որ առագաստանավային դպրոցը, որը գործում է Սեւանում, նախկինում տվել է օլիմպիական խաղերի, աշխարհի ու Եվրոպայի առաջնությունների, միջազգային մրցումների բազում հաղթողներ եւ մրցանակակիրներ:

-Պետք է ավանդույթները շարունակել, ինչի ուղղությամբ այսօր ֆեդերացիան քայլեր է ձեռնարկում: Այս հուշամրցաշարն էլ իր հերթին ուղղված է առագաստանավային սպորտի մասսայականացմանը,- նշեց Սմբատ Հակոբյանը:

Հուշամրցաշարը դատել են միջազգային կարգի մրցավարներ: Սեւանա լճում անցկացվող առագաստանավային սպորտի բաց առաջնության հաղթողները պարգեւատրվեցին պատվոգրերով, մեդալներով եւ նվերներով:

Արմինե Ղուկասյան

ՄԱՐՏՈՒՆՈՒ ՊԱՏԿԵՐԱՍՐԱՀՈՒՄ ԲԱՑՎԵԼ Է ԳԵՂԱՆԿԱՐԻՉ ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԸ

Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքի պատկերասրահում բացվել է գեղանկարիչ Մարիամ Գալստյանի «Ընտանեկան բռնության կանխարգելում գեղանկարչության միջոցով» խորագրով թեմատիկ ցուցահանդեսը:

Ինչպես տեղեկացրեց Մարտունու պատկերասրահի տնօրեն Անահիտ Գեւորգյանը, ցուցահանդեսը եղել է յուրօրինակ փորձ՝ արվեստի լեզվով բարձրաձայնելու ընտանեկան բռնության կանխարգելման կարեւորությունը: Ներկայացված կտավները լի էին մարդկային ներքին ուժի, հույսի, տոկունության եւ հոգեբանական վերականգնման խորհրդանշական թեմաներով:

Միջոցառման շրջանակում կազմակերպվել է նաեւ ակտիվ քննարկում Գեղարքունիքի մարզի Կանանց աջակցման կենտրոնի համակարգողի մասնակցությամբ: Անդրադարձ է կատարվել ընտանեկան բռնության երեւույթին, առկա խնդիրներին եւ իրավական ու հոգեբանական պաշտպանական մեխանիզմներին:

-Միջոցառմանը մասնակցեցին Մարտունու համայնքապետարանի աշխատակիցները, ինչպես նաեւ Հայաստանում Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանատան մշակութային կենտրոնի աշխատակիցները՝ կենտրոնի ղեկավար Մոհամմադ Ասսադի Մովահեդի գլխավորությամբ: Մովահեդը, բարձր գնահատելով ցուցահանդեսի գեղարվեստական ու սոցիալական նշանակությունը, պատրաստակամություն հայտնեց՝ աջակցել այն նաեւ Իրանում կազմակերպելուն: Ներկաները շատ գոհ ու հոգեպես հարստացած հեռացան ցուցահանդեսից,-ներկայացրեց Անահիտ Գեւորգյանը:

Խոսրով Խլղաթյան

ՈՒՂՂՈՒՄ

«Գեղամա աշխարհ» թերթի 2026 թվականի 16-րդ համարի հրատարակման ամսաթիվը 2026 թվականի հունիսի հունիսի 30-ի փոխարեն համարել՝ **2026 թվականի հուլիսի 31:**

Հայցում ենք մեր ընթերցողների ներողամտությունը:

«Գեղամա աշխարհ»

17.qxd 23/08/2026 15:01 Page 8

ՍԵՎԱՆՈՒՄ ԿՈՉՏ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՏԵՍԱԿԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՄԵԿ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՋՈՂ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ Է ԲՌՆԵԼ

2025 թվականի հուլիսի 26–ին Սեւան քաղաքում տրվել է սկզբնաղբյուրում կոշտ կենցաղային թափոնների տեսակավորման համակարգի ներդրման ծրագրի պաշտոնական մեկնարկը, ու մեկ տարվա ընթացքում այն հաջող քննություն է բռնել:

Շուրջ 300000 եվրոյին համարժեք աջակցության շրջանակում Սեւանին նվիրաբերվել է եվրոպական արտադրության 1680 թափոնաման եւ մեկ VOLVO մակնիշի բեռնատար թափոնատար ավտոմեքենա:

Տեսակավորված աղբը սանիտարական աղբավայր է տեղափոխվում «Կոտայքի եւ Գեղարքունիքի ԿԿԹԿ» ՍՊԸ-ի միջոցով, որին Սեւան համայնքը արտապատվիրակել է տեսակավորված աղբի հավաքման եւ տեղափոխման ողջ գործընթացը:

Թափոնների տեսակավորումը սկսվում է տնից: Սեւանցիները պետք է առանձնացնեն թափոնները եւ հետո գցեն համապատասխան թափոնամանների մեջ: Կապույտի մեջ՝ պլաստիկ, թուղթ, մետաղ, իսկ կանաչի մեջ՝ միայն ապակի: Սեւան քաղաքում տեղադրված կանաչ եւ կապույտ թափոնամաններից որոշները հանվել են:

«Սեւան երիտասարդական ակումբ» ՀԿ-ն իրականացնում է թափոնների տեսակավորման իրազեկման եւ տեսակավորումը խրախուսող միջոցառումներ եւ նախաձեռնություններ:

Սեւանի յուրաքանչյուր բնակիչ պետք է միանշանակ ընդունի, որ Սեւան քաղաքին նվիրաբերված թափոնամանները համայնքի սեփականությունն են եւ պահանջում են սրտացավ, պատասխանատու վերաբերմունք եւ մոտեցում: Մենք ունենք շատ հաջողված օրինակներ, որոնք դրսեւորել են ինչպես կազմակերպությունները, այնպես էլ անհատ քաղաքացիները: Նրանք ծրագրին ոչ միայն մոտեցել են լրջորեն, այլ նաեւ հանդես են բերել նախաձեռնություններ: Նախ ուզում եմ շնորհավորել մեր բնակիչներին՝ մեկ տարվա դժվարությունները հաղթահարելու եւ առաջ շարժվելու համար: Եվ այն մշակույթը, որը ամուր ծիլեր է գցել մեր համայնքում, արդեն հետընթացի ճանապարհ չունի: Իսկ առաջիկա տարիներին մենք այս ոլորտում կարձանագրենք նոր ձեռքբերումներ, նոր մոտեցումներ՝ ապակիների, պլաստիկների, այլ թափոնների հետ մեկտեղ կատարելով նաեւ օրգանիկ սննդի տեսակավորում, անելով այնպես, որ հնարավորինս պակասի թափոնների մուտքը դեպի աղբավայր,- նշեց Սեւանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Արմենուհի Ղուկասյանը:

Սեւանում մեկնարկած սկզբնաղբյուրում կոշտ կենցաղային թափոնների տեսակավորման նոր համակարգը կյանքի է կոչվել Շվեդիայի կողմից ֆինանսավորվող «Հայաստանում թափոնների կառավարման քաղաքականություն» ծրագրի կողմից, որն իրականացնում է Հայաստանի ամերիկյան համալսարանի Յակոբեան բնապահպանական կենտրոնը՝ ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության եւ ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության հետ համատեղ:

Արմինե Ղուկասյան

ԾԱԿՔԱՐ ԳՅՈՒՂՈՒՄ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՆՈՐ ՊՈՄՊԱԿԱՅԱՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՄՈՏԵՆՈՒՄ ԵՆ ԱՎԱՐՏԻՆ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ծակքար գյուղում ՀՀ կառավարության կողմից 2024 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում ավարտական փուլում են գտնվում խմելու ջրի մատակարարման նոր համակարգի կառուցման աշխատանքները:

Ինչպես տեղեկացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից, Ծակքարի խմելու ջրի մատակարարման նոր պոմպակայանի կառուցման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 69 միլիոն 700 հազար դրամ, որի 75 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 25 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2024 թվականին, բարձրավոլտ լարման էլեկտրական հոսանքի գծերը տեղափոխելու պատճառով ընդհատվել 2025 թվականին եւ շարունակվել 2026 թվականի ընթացքում: Այս տարվա հուլիսի 30-ի դրությամբ շիբնարարությունն ավարտի է հասցվել շուրջ 95 տոկոսով:

Ծրագրի իրականացման արդյունքում նոր կառուցվող պոմպակայանի միջոցով հավելյալ ջրաքանակ է մղվելու Ծակքարի խմելու ջրի մատակարարման օրվա կարգավորիչ ջրամբար՝ ամռան ամիսներին առաջացած ջրի պակասի խնդիրը կարգավորելու նպատակով:

Շինարարարական աշխատանքները տեղում դիտարկելու նպատակով օրերս Ծակքարի պոմպակայանի շինհրապարակ է այցելել Մարտունի համայնքի ղեկավար Հովհաննես Հովեյանը:

Գեղամա աշխարհ

ՆԵՐՔԻՆ ԳԵՏԱՇԵՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆԸ ԲԱՑՎԵԼ Է ԱՎԱԳ ՍԵՐՆԴԻ ՀԱՄԱՐ ԺԱՄԱՆՑԻ ԵՎ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ներքին Գետաշեն գյուղի մշակույթի տանը տեղի է ունեցել ավագ սերնդի համար ժամանցի եւ զբաղվածության կենտրոնի բացման հանդիսավոր արարողությունը:

Ինչպես տեղեկացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից, նորաբաց կենտրոնը կրում է «Գտնված երազ» անվանումը:

Ծրագիրն իրականացվում է «Իմ Քայլը» բարեգործական հիմնադրամի «Կրթվելը նորածեւ է» նախաձեռնության շրջանակում՝ Ներքին Գետաշենի տեղական կոմիտեի աջակցությամբ:

-Կենտրոնը նախատեսված է Մարտունի համայնքի 60 եւ բարձր տարիքի բնակիչների համար: Այն հնարավորություն կտա՝ ավագ սերնդի ներկայացուցիչներին ապահովել ակտիվ ու բովանդակալից առօրյա՝ շաբաթական երկու անգամ մասնակցելով կերպարվեստի, հոգեբանական թերապիայի, առողջարար մարմնամարզության, հրուշակագործության, գրական քննարկումների եւ մեդիագրագիտության դասընթացներին:

Միջոցառման ընթացքում մանրամասն ներկայացվեց կենտրոնի գործունեությունը, նախատեսվող ծրագրերն ու մասնակցության կարգը,- տեղեկացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից:

ՍԵՎԱՆՈՒՄ ԲԱՑՎԵԼ Է ԿԱՎԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՎԵ ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԽՄԲԱԿ

Գեղարքունիքի մարզի Սեւան համայնքում գործող Տարաս Շեւչենկոյի անվան մշակույթի կենտրոնում բացվել է կավագործության եւ կավե քանդակագործության խմբակ:

Վերջերս Հայաստանի Հանրապետությունում Ուկրաինայի գործերի ժամանակավոր հավատարմատար Վալերի Լոբաչը եւ Ուկրաինայի դեսպանության աշխատակիցները մասնակցել են Սեւան խմբակի բացման արարողությանը:

Բացման հանդիսավոր արարողությանը մասնակցել են Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի, Սեւանի համայնքապետարանի, հասարակական կազմակերպությունների, կրթական հաստատությունների, Հայաստանի ուկրաինացիների «Ուկրաինա» ֆեդերացիայի, ինչպես նաեւ ուկրաինական համայնքի ներկայացուցիչներ: Պատվավոր հյուրերի թվում են եղել նաեւ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Դեկորատիվ-կիրառական արվեստի ֆակուլտետի պրոֆեսիոնալ կերամիստ դասախոսները:

Պաշտոնական մասից հետո երեխաների եւ բոլոր ցանկացողների համար անցկացվել է հետաքրքիր կավագործության վարպետաց դաս: Վարպետ Գագիկ Խաչատրյանի ղեկավարությամբ մասնակիցներն առաջին անգամ փորձել են աշխատել կավագործական անվի վրա՝ սեփական ձեռքերով պատրաստելով իրենց առաջին կավե աշխատանքները:

Միջոցառման ընթացքում Վալերի Լոբաչը շնորհակալություն է հայտնել Տարաս Շեւչենկոյի անվան ուկրաինական մշակույթի կենտրոնի ղեկավար Լյուսիենե Գոնչոյանին՝ այս կարեւոր նախաձեռնության իրականացման համար, ինչպես նաեւ բոլոր գործընկերներին, որոնք աջակցել են դրա կյանքի կոչմանը: Առանձնահատուկ շնորհակալության խոսքեր են ուղղվել Հայաստանի Կարմիր Խաչի ընկերությանը, որի աջակցությամբ խմբակի համար ձեռք են բերվել կավագործական անիվ, կերամիկայի թրծման հատուկ վառարան եւ դասերի անցկացման համար անհրաժեշտ նյութեր:

-Նման նախագծերը շատ ավելին են, քան պարզապես ստեղծագործական պարապմունքներ: Դրանք միավորում են մարդկանց, օգնում երեխաներին բացահայտել իրենց տաղանդները, պահպանել ուկրաինական մշակութային ժառանգությունը եւ միաժամանակ խորացնում են ուկրաինական եւ հայկական ժողովուրդների բարեկամությունը,- նշել է Վալերի Լոբաչը:

Այս նախաձեռնությունը դարձավ եւս մեկ կարեւոր քայլ Հայաստանում ուկրաինական համայնքի զարգացման, երեխաների եւ մեծահասակների ստեղծագործական զարգացման նոր հնարավորությունների ստեղծման, ուկրաինական ավանդույթների պահպանման եւ ուկրաինացիների ու հայ գործընկերների միջեւ մշակութային կապերի ամրապնդման գործում:

Արմինե Ղուկասյան

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ 8 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐԻ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՏԿԱՑՎԵԼ Է 631 ՄԻԼԻՈՆ 85 ՀԱԶԱՐ ԴՐԱՄ

ՀՀ կառավարության 2026 թվականի օգոստոսի 6-ի հերթական նիստում որոշում է կայացվել՝ ՀՀ պետական բյուջեից 631 միլիոն 85, 8 հազար դրամ հատկացնել ՀՀ Գեղարքունիքի մարզի 8 մանկապարտեզների շինարարական աշխատանքների իրականացման համար:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության եւ ենթակառուցվածքների կառավարման վարչությունից, 43 միլիոն 20 հազար դրամ հատկացվել է Մարտունի քաղաքի թիվ 4, 111 միլիոն 184,7 հազար դրամ Ջորագյուղ գյուղի, 73 միլիոն 332 հազար դրամ՝ Սեւան քաղաքի «Հեքիաթ», 77 միլիոն 58 հազար դրամ՝ Ծովագյուղ գյուղի, 37 միլիոն 62 հազար դրամ՝ Կարմիրգյուղ գյուղի մանկապարտեզների շենքերի վերանորոգման աշխատանքները ավարտին հասցնելու համար:

269 միլիոն 280,0 հազար դրամ հատկացվել է Ջովաբեր բնակավայրի մանկապարտեզի շենքի վերանորոգման աշխատանքները իրականացնելու համար:

50 միլիոն 724 հազար դրամ հատկացվել է Գավառ քաղաքի թիվ 7 եւ Ճամբարակ քաղաքի թիվ 3 մանկապարտեզների շենքերի հիմնանորոգման լրացուցիչ աշխատանքների իրականացման համար:

Լրատվական գործունեություն իրականացնող «Գեղարքունիք» թերթի խմբագրություն» ՓԲԸ: Հասցեն՝ ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7
էլ.հասցե՝ khosrov1@yandex. ru
Կայք էջ՝ https://geghama.am/
Գլխավոր խմբագիր՝ Խոսրով Խլղաթյան
հեռ. բջջ. 094022692

Վկայական՝ 02 Ա 050560: Գրանցման համարը՝ 25.120.00834:
Տրված 07.05.2001թ.: Տպաքանակը՝ 1000: Ծավալը՝ 2 մամուլ:
Թողարկման օրը՝ 20. 08. 2026 թ.:
Տպագրվում է «Հայկարլի» ՓԲԸ տպարանում:
«Գեղամա աշխարհ» թերթի բոլոր համարներին կարող եք ծանոթանալ https://tert.nla.am կայքում: